լով գոհ եղանք. և որովհետեւ յիշեալ կանոնագիրը՝  
Ռուսումնական խորհրդոյ պատրաստած Վարեկարգու  
թեան կանոնագրութիւնը չհրատարակուած՝ պատ  
րաստուած է, և առժամանակեաց կերպիւ գործադ



բուժեան տնուում , ուստի նոյնը ըստ ամենայնի Վարեկարգութեան կանոնադրութեան համաձայնեցնելու և այնպէս գործադրելու սէտքը կը նկատենք , տեղական և մասնաւոր պարագաներու համար սահմանուած կանոնները պահելով . ըստ որում ընդհանուր ազգային վարժարանները միօրինակ բարեկարգութեան մէջ մտցնելու կարևորութիւնն զգալի եղած է . և այս մասին Աստուծոյ կողմէն խորհրդոյ կողմանէ ալ մեծ հոգւորութիւն կայ :

12 Հոկտ . 1864

(Ստորագրեալ)

Ի գիմաց և այլն

Յ . Տէրոյեան

Ս . Փափաղեան

Ի . Այտել-Բիւն

Արկրորդ անգամ այցելութիւն ընելով վարժարանիս ի գիմաց Աստուծոյ կողմէն , տեսանք որ Աստուծոյ գիտողութեանց վրայ փոփոխութիւն մը չէ կրեր վարժարանս . թէպէտ ցաւեցանք այս զանցառութեան վրայ . սակայն իմանալով թէ Թաղական խորհրդէ հրատարակներ գտնուելով , անոնց տեղ նորոգ ընտրութեան խնդիրը աւելի տուեր է այս զանցառութեան , կը փութանք նորակազմ Թաղական խորհրդոյ ուշադրութիւնը հրաւիրել մեր գիտողութեանց վրայ , և խնդրել որ Վարեկարգութեան կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն վարժարանիս ընթացք և շարժում տալու հոգ ու խնամք ունենալու բարեհաճի :

Կանոնադրութեան 31<sup>րդ</sup> յօդուածին համաձայն այս գիտողութիւննիս հոս Վիտողո-Բեան գեղիս մէջ կ'արձանագրենք . և առանձին նամակաւ ալ կը հաղորդենք Թաղական խորհրդոյ :

9 Դեկտ . 1864

(Ստորագրեալ)

Ի գիմաց և այլն

Ս . Փափաղեան



Թաղ. Խորհրդոյ Վումգարու  
Մայր Եկեղեցւոյ .

Հոկտեմբեր 12 ին ի դիմաց Աւսումնական Խորհրդոյ Տերոյենց պատուելիին հետ այցելութեան եկանք տեղւոյս վարժարանին, և մեր դիտողութիւնը հոն 'Վիտողո-իւան փոքրին մէջ արձանագրեցինք: Այսօր կրկին անգամ եկանք և տեսանք ու խմացանք որ մեր դիտողութեանց մասին գործադրութիւն մը չկայ. տեղեկացանք որ այս զանցառութեան տեղի տուեր է Թաղական Խորհրդէ հրաժարուողներու տեղ նորոգ ընտրութեան խնդիրը. սակայն հիմայ որ Թաղական Խորհուրդը ամբողջ կազմուած է, կը խնդրենք իր ուշադրութիւնը մեր դիտողութեանց վրայ. և Վարեկարգութեան կանոնադրութեան համաձայն վարժարանիս ընթացք և շարժում տալու յօժարութիւնը:

Ասանկ խնդրոյ մը վրայ Պատուարժան Խորհրդոյդ մեծ հոգողութիւն ունենալը գիտնալով, և մանաւանդ վստահ ըլլալով որ ազգային դաստիարակութեան յառաջադիմութեանը աջակից և անձնուէր ջանադիր էք, յոյս ունինք որ երրորդ անգամի այցելութեան միջոցնուս սոյն զանցառութեան մասին դիտողութեան պէտք չենք ունենար:

9 Դեկտ. 1864

Մայր Եկեղեցւոյ

վարժարան

(Ստորագ.)

Ի դիմաց և այլն

Ս. Փափաղեանց

(Սոյն նամակը վարժարանիս կառավարիչ Պ. Յ. Տեր Պետրոսեանի միջոցաւ խրկուած է առ Թաղական Խորհուրդն:)



## Գ Ո Ւ Մ Ք Ա Բ Ո Ւ Յ Ի Դ Ո Ւ Ր Ս

ՊԵՋՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Ա. ԱՅԵԼ-Ի-Ն

Տեղւոյս կրկին ( մանչ և աղջիկ տղայոց ) վարժարանաց հոգաբարձութիւնը Վարեկարգութեան կանոնադրութեան համեմատ վարժարանաց տեսչութիւնը վարել սկսած է տարւոյս սեպտեմբեր 1 էն ի վեր : Վաստուաց և կառավարչի օրագրութիւնները ըստ օրինի կը շարունակուին . հայկաբանութեան դասատուն սեպտեմբեր ամսոյ վերջը իր կարգերուն ամսական քննութիւնն ալ ըրած է : Այս հոգերը կը ցուցնեն որ մեծ փոյթ կայ կանոնադրութիւնը անթերի գործադրելու . և ասիկա ալ կը յուսանք որ հետզհետէ տեսնելու բաղդը կ'ունենանք :

Կառավարչի օրագրութեանը վերաբերեալ մասնաւոր հրահանգ մը տալ պատշաճ համարեցինք . նոյնպէս կարգերը Վախակրթական վարժարանի ուսմանց ընթացքին հետզհետէ յարմարցնել առաջարկեցինք Հոգաբարձութեան կողմանէ վարժարանիս տեսուչ դըրված Անդրուբեան Ակրտիչ աղային , որ վարժարանիս մէջ Հայկաբանութեան և Պատմութեան դասատու ալ է :

Պ. Տեսուչը խոստացաւ մեզ՝ մեր դիտողութեանց ճշգիւ գործադրութիւնն ընել , և յայտնեց նաև Պատուարժան Հոգաբարձութեան ունեցած մեծ հոգը Կանոնադրութեան անթերի գործադրութեանը մասին , ինչպէս նաև ամէն կարգերու ամսական քննութիւններն ընել տալու , և իւրաքանչիւր աշակերտի ամսական վիճակացոյցը ( տես Կանոնադրութեան յօդ . 60<sup>ր</sup> ) իրենց ճնողաց խրկելու մասին . ուստի գոհ սըրտիւ հոս սոյն դիտողութիւնները կ'արձանագրենք :

19 Հոկտ . 1864 .

Ի դիմաց և սյրն

Պէզճեան վարժարան ( Սորգ . ) Ս. Փափաղեանց



Արկրորդ անգամ այցելութիւն ընելով վարժարանիս , Ա . անգամի դիտողութեանց համեմատ պէտք եղած կարգադրութիւններուն ձեռնարկութիւնը գոհութեամբ սրտի տեսանք . կառավարչի օրագրութիւնը ըստ օրինի պատրաստուած էր . կարգերը հետզհետէ Նախակրթական վարժարանի ուսմանց ընթացքին յարմարցնելու փոյթ կայ . և ասիկա որչափ դժուարին ալ ըլլայ առ այժմ , կը յուսամք որ Վարեկարգութեան կանոնադրութեան համաձայն վարուելու մասնաւոր խնամք ունեցող այս վարժարանը օր ըստ օրէ այս և ուրիշ ասոնց նման դժուարութեանց կը յաղթէ : Արք . Պատմութեան ուսումը մտցնելու , ազգային պատմութիւնը նոր սկսող կարգերէն սկսեալ՝ ամէնուն աւանդելու հոգ տանիլ կը խնդրուի . և մասնաւորապէս Վաղղիերէն և Տաճկերէն լեզուաց ուսումն աւանդելը՝ Նախակրթական վարժարանի ընթացքը աւարտելէ ետքը սահմանելու փոյթ ըլլայ . և ասոր համար եթէ արդէն սկսող և յառաջ տանողներուն արդելք ըլլալ չուզուի , գոնէ Վերականութիւնը նոր և ասկէ ետքը սկսողներուն համար որոշուած կարգը պահուի :

7 Դեկտ . 1864

Ի դիմաց և այլն

Պեղձեան վարժարան

(Ստորագրեալ) Ս . Փախաղեան

Գ Ո Ւ Մ Գ Ա Բ Ո Ւ

Ս . ԼՈՒՍՍԻՈՐԶԻ ՎԱՐՃԱԲԱՆ

Այլ կանց վարժարանիս այցելութիւն ընելով , անոր արդի վիճակին վրայ պէտք եղած տեղեկութիւնը



ներկայ վարժապետէն ստանալով արձանագրեցինք մասնաւոր տեղեկագրի մը վրայ : Ինչ որ անցեալ շաբթու Վուսթաբուլի Վայր Ազգեղեցւոյ վարժարանին վրայ դիտողութեան արժանի կէտ նշմարեցինք , մի և նոյնն է նաև այս վարժարանիս համեմատ , որ յիշեալ Ազգեղեցւոյն թաղական խորհրդոյն իրաւասութեան ներքե է , և առժամանակեայ կերպիւ գործադրութեան առնուած մասնաւոր կանոնագրի մը համեմատ , սեպտեմբեր 1 է ի վեր , նոր կարգադրութեան ներքե մտած :

Արյուսանք թէ այս մասնաւոր կանոնագիրն ալ Աւսումնական խորհրդոյ հրատարակած Վար . կանոնագրութեան համաձայնեցնելու հոգ կ'ունենայ տեղւոյս պատուարժան թաղ . խորհուրդը :

19 Հոկտ . 1864

Ի գիմաց և այլն

Ս . Աւսաւորչի վարժարան

(Սփորագրեալ)

Ս . Փափաղեանց

Բ Ե Ր Ա

ՆԱՐԵԿԵՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Իերայի Վարեկեան վարժարանի այցելութիւն ընելով , թէ սոյն վարժարանին և թէ Հռիփսիմեան աղջկանց վարժարանին և թէ Աջմիածնայ Ծաղկոց վարժարանին ընթացքին վրայ պէտք եղած տեղեկութիւնները արդէն հոգաբարձուաց կողմանէ գրուած պատրաստուած ըլլալով , հոգաբարձու Ալվրուզեան Աբեթիկ աղայէն ընդունեցինք . և նկատեցինք որ սոյն վարժարանայ ընթացքը Վարեկարգութեան կանոնագրութեանը ըստ ամենայնի չհամաձայնիր . ուստի ըստ կանոնագրութեան յիշեալ վարժարանները կարգադրելու մասին հոգ ու խնամք տանիլը կը խնդրուի տեղւոյս վարժարանայ Պատուարժան Հոգաբարձութեանէն :

19 Նոյ . 1864

Ի գիմաց և այլն

(Սփորագրեալ)

Կ . Գ . Կոստանդեան

Ս . Փափաղեանց



## ԽՈՐԵՆԵԱՆ ՎԱՐՃԱՐԸՆ

Ազգային Աստուծնական խորհրդոյ կողմանէ այցելու թեան գալով տեսայ որ դպրոցին մէջ ամենեին գործադրուած չէ Աստուծնական խորհրդոյ կանոնադրութիւնը . Քրիստոնէականի , Պատմութեան , Աշխարհագրութեան դասատուութիւն ամենեին չկայ . օրագրութիւն , աշակերտաց ցանկ և վերջապէս ամէն բարեկարգութիւն գրեթէ կը սրակսին . վերջի աստիճան խեղճութեան մէջ կը գտնուի դպրոցը , և բարեկարգութեան մեծ կարօտութիւն ունի :

Այս տողերը սիրտս ցաւելով կը գրեմ և կը յուսամ որ ուրիշ անգամ Աստուծնական խորհրդոյ կողմէն այցելութեան եկող մը աւելի բարեկարգ սխալի գտնայ ձեր դպրոցը յօգուտ թաղիդ խեղճ և աղքատ և մատաղ մանկանց , որոց ասպագայ վիճակը գրեթէ ձեր շնորհիւ ներկայ դաստիարակութենէն կախումն ունի :

4 Դեկտ . 1864

Ի դիմաց և այլն

Խորենեան վարժարան

(Սփր .)

Ս . Սիւսյեւեան

## Ք Ա Ր Ա Կ Ե Օ Մ Ր Ի Ի Ք

Առ մեծապատիւ հոգաբարձուս վարժարանաց միացեալ թաղից ի Քարակէօմրիւք և ի Սալմաթօմրուք .

Այսօր Աստուծնական խորհրդոյ կողմանէ այցելութեան գալով տեսայ որ բոլորովին բարեկարգութենէ զուրկ են կրկին դպրոցները Ասիեան և Թադէոսեան . Քրիստոնէականի , Պատմութեան , Աշխարհագրութեան և Թուաբանութեան դասատուութիւն ամենեւին չկայ . Աստուծնական խորհրդոյ կանոնադրութիւնը ամենեւին գործադրուած չէ : Աշակերտաց այս վիճակը շատ ցաւալի է :



Այս տողերը ցաւօք սրտի կը գրեմ. և կը յուսամ որ ուրիշ անգամ Աւսումնական խորհրդոյ կողմէ եղած այցելութիւն մը աւելի բարեկարգ պիտի գտնէ ձեր դպրոցները, յօգուտ թաղիդ խեղճ աղքատ և մատաղ մանկանց, որոնց ապագայ վիճակը գրեթէ ձեր շնորհիւ արուած ներկոյ դաստիարակութենէն կախումն ունի:

4 Դեկտ. 1864

Քարակէօմրիւք

Ի դիմաց և այլն

(Սիրազ.) Ս. Սիւյեղեան

### Պ Ե Շ Ի Կ Թ Ա Շ

#### Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՐԺԱՐԱՆ

Առաջին անգամ գիւղիս վարժարանին այցելութիւն ընելով, անոր արդի վիճակին վրայ պէտք եղած տեղեկութիւններն ստանալով, սովորական տեղեկագրի վրայ արձանագրեցինք, զանոնք Աւսումնական խորհրդոյ տանելու համար: Վարժարանին ընթացքը քննելով գոհ սրտիւ տեսանք որ Քարեկարգութեան կանոնադրութեան գործադրութեանը հոգ կը տարուի:

Աստի պարտք կը համարինք մեզ այս մասին շնորհակալութիւն մատուցանել վարժարանիս տեսչութիւնը վարող պատուարժան Թաղական խորհրդոյն, և անոր կողմանէ հոգաբարձութեան յատկացած և նոյն խորհրդոյ անգամ մեծայարգ կարապետ աղա Իւթիւճեանի, որ թաղիս մանկտին մարդկութեան կարևոր ուսմանց մէջ զարգացնելու փոյթ ունին միօրինակ բարեկարգութեան եղանակաւ: Միայն քանի մը դիտողութիւն կ'ընենք, յուսալով որ ուրիշ անգամ Աւսումնական խորհրդոյ կողմանէ այցելութիւն եղած միջոցին նոյները տեղի չեն ունենար: Արբազան Պատմութեան դասախօսութիւնը սկսուի. ուսմանց ընթացքը, որչափ կարելի է, հետզհետէ կանոնադրու-



Թեան սրամադրու թեանց պատշաճեցնելու ջանքը շարունակուի, իւրաքանչիւր դասատու իր օրական դասը օրագրու թեան տետրին մէջ արձանագրելով ըստ սրագրէ, ամսական քննութիւնները կարելի եղածին չափ կատարուին:

23 Յունիս 1865  
Ս. Աստուածածնայ վարժարան  
(Սորաֆրեալ)

Ի դիմաց և այլն

Գ. Գրասէրեան  
Ս. Փափաղեանց

### Մ Ի Զ Ա Գ Ի Ի Ղ

#### Վ Ա Ր Ժ Ա Ր Ս Ն Ս Ր Բ Ո Ց Թ Ա Ր Դ Մ Ա Ն Չ Ա Ց

Գիւղիս մանչ տղայոց վարժարանիս Ա. անգամ այցելութիւն ընելով, անոր արդի վիճակին վերաբերեալ տեղեկութիւնները ներկայ գտնուող վարժապետներէն քաղելով, սովորական տեղեկագրի վրայ արձանագրեցինք, զանոնք Աստուծոյնական խորհրդոյ տանելու համար:

Նկատեցինք որ վարժարանիս ուսումնական վիճակը մանաւանդ բարձրագոյն կարգերունը գոհացուցիչ է, և անոնց վրայ թէ հոգաբարձութեան և թէ դասատուաց ջանքը յայտնի կ'երևայ, սակայն ցաւ եղաւ մեզի, երբ նկատեցինք որ իւրաքանչիւր ուսման համար յատուկ կարգերու բաժանման մէջ անպատեհութիւն մը կայ, այսինքն հայկաբանութեան Ա. կարգէն եղող տղայ մը, թուաբանութեան մէջ Բ. կարգէն կը գրտնրվի և այլն. աս անպատեհութիւնը յուսով ենք որ վարժարանիս պատուարժան Հոգաբարձութիւնը կը վերցնէ, և մէկ կարգի աշակերտները ամէն ուսմանց համար դասընկեր կը կազմէ, գոնէ վերջին կարգերուն



աշակերտները, որ դժուարութեան տեղի ալ չունի :  
 Օրագրութիւնը ժամանակ մը խափանուած ըլլալէ  
 ետքը, նորէն սկսուեր է գործածուիլ : Այսք է նաև  
 Վարեկարգութեան կանոնադրութեան 39<sup>7</sup> յօդուա-  
 ծոյն տրամադրութեանը համեմատ իւրաքանչիւր դասա-  
 տու իր օրական դասը արձանագրէ օրագրութեան մէջ  
 և ստորագրէ : Առաւօլարջի օրագրութիւնն ալ բաց ի  
 աշակերտաց վարուց և բացակայութեան նիշերը պա-  
 րունակելէ, այսք է պարունակէ նաև այն ամէն անց-  
 քերը, որ տեղի կ'ունենան վարժարանին մէջ և որոնք  
 հոգաբարձութեան ուշադրութիւնը կրնան գրաւել .  
 նաև եկող կամ չեկող դասատուները, և այցելութեան  
 եկող պաշտօնական անձինքը և այլն . տես Աանոնադ-  
 րութեան 36 յօդուածը :

Աւրախ սրտիւ նկատեցինք որ վարժարանիս էն յե-  
 տին կարգէն սկսեալ ազգային պատմութեան դասա-  
 խօսութիւնը կ'աւանդուի . բայց մեծ ցաւ եղաւ մե-  
 ղի, երբ Արբաղան պատմութեան դասախօսութիւնը  
 զանց առնուիլը տեսանք, մանաւանդ երբ էն բարձ-  
 րագոյն կարգին համար տեղեկութիւն առած ատեն-  
 նիս իմացանք որ Ազգային և Արբաղան պատմութիւն  
 բնաւ չեն կարդացած . ասիկա, ինչպէս կերևի, ժա-  
 մանակին զանց առնուելուն արդիւնքն եղած է . և հի-  
 մա որ էն յետին կարգին Ազգային պատմութիւն ա-  
 ւանդուիլ սկսուած է, այս անպատեհութեան ա-  
 ռաջքն առնուած կը համարուի : Բայց աղէկ կ'ըլլայ  
 որ ուսմանց ընթացքը կանոնաւոր հիման մը վրայ  
 դրուի . ուստի թէ այս ուսման ընթացքը թէև ու-  
 ըրիչ բարեկարգութեան արժանի կէտերը աւելի որոշ  
 հասկցնելու համար արժան դատեցինք Վարեկարգու-  
 թեան կանոնադրութեանէն օրինակ մը թողուլ վարժա-  
 րանիս մէջ . յուսալով որ անոր անթերի գործադրու-  
 թեամբքը այս դիտողութիւններն ալ ուրիշ անգամի  
 այցելութեան միջոցին ամենեւին տեղի չեն ունենար .  
 և ասանկով թէ թաղիս պատուարժան Խորհրդոյն, և



Թէ Հոգաբարձութեան ջանքն աւ աշխատութիւնը  
աւելի արդիւնաւոր կ'ըլլայ աւ կը պատահուի :

23 Յունիս 1865

Ի դիմաց և այլն  
(Ստորագրեալ) Գ. Գրասէրեան  
Ս. Փափաղեանց

Է Է Տ Ի Գ Ո Ւ Լ Է

Ս . Փ Բ Կ Չ Ի Վ Ե Ր Ժ Ա Ր Ա Ն

Սուսումնական խորհրդոյ կողմանէ առաջին անգամ  
այցելութեան գալով, վարժարանիս արդի վիճակին  
վրայ տեղեկութիւններն ստացանք ներկայ վարժապետ  
ներէն : Այս տեղեկութիւնները 1864 դեկտեմբեր 26  
թուականին խորհրդոյս շրջաբերականաւր ուղուած  
էին, բայց պատասխան չընդունուեցաւ Ս. Փրկչի վա  
նուց նախորդ Հոգաբարձութեանէն : Սուսումնական  
խորհուրդը Ս. Փրկչի Վանուց նիւթական մատակա  
րարութեան մասին կրած դժուարութեանց ցաւօր  
սրտի նկատելով ստիպուած էր սպասելու, և Հոգա  
բարձութեան մեղադիր չըլլալու : Այնպէս պարտա  
ւորեցաւ սպասել, մինչև որ նորոգ կազմեալ Հոգա  
բարձութիւնը պատահութիւն ունենայ նիւթականի  
մասին դժուարութիւններէն ազատելով այս որքանոց ե  
ղող վարժարանին ուսումնական վիճակին հոգ տանե  
լու : 1865 մարտ 16 ին Սուսումնական խորհուրդը նո  
րէն գիր մ'ուղղեց առ պատուարժան Հոգաբարձու  
թիւնն, և պատասխանը մինչև ցայսօր չստանալով,  
ստիպուեցաւ իր կողմանէ զմեզ յայցելութիւն վար  
ժարանիս յուղարկել :

Աւստի տեղեկութեանց նայելով, վարժարանիս ու



սուսնական վիճակը դահայուցիչ չգտանք . իրաւ է որ  
 Պ . Սիմոն Սէլէկեան Հայկաբանութեան մասին , և  
 Պ . Նիկողոս Թաշճեան Նրաժշտութեան մասին անձ-  
 նուիրաբար ծառայութիւն ընելով շաբթու մէջ մէյ-  
 մէկ որ դաս տալու կուգան . սակայն ասոնք դարձեալ  
 վարժարանս կանոնաւոր ընթացքի մը մէջ մտած ըլլա-  
 լուն հաստատութիւն մը չեն : Սահմանադրութիւնը  
 այս վանուցս մէջ վարժարանի մը գոյութիւնը կը հաս-  
 տատէ . և այս շէնքն ալ վարժարանին անունը կրելով ,  
 112 ի չափ որք և անտէրունչ հայ զաւակներ այսօր իր  
 մէջ կը պարունակէ . բայց պէտք էր որ գոնէ Նախա-  
 կրթական ուսմունքը կանոնաւոր ընթացքով մը աւան-  
 դուէին հոս , Նղգին որք մանկուոյն գոնէ ուսմանց  
 նախնական ճաշակ մը տալով անոնց ժամանակը յուժ-  
 պէտս չվատնուէր : Այսօր հոս կը տեսնուի Հայերէ-  
 նի Վաղղիերէնի պարապում , Թուաբանութեան՝ Աշ-  
 խարհագրութեան ալ նոր սկզբնաւորութիւն , և բո-  
 վանդակ 470 զուրուշ ծախք կ'ըլլայ դասատուի համար :  
 Այցելուքս կը նկատենք որ եթէ այս ծախքը գոնէ առ-  
 այժմ 1000 զուրուշի բարձրանայ և ուսմանց կարգէն  
 ալ Վաղղիերէնը գաղբեցնելով , կամ անիկա միայն  
 Հայերէնի մէջ յաջողակ աշակերտաց աւանդելի ընե-  
 լով , Նղգային Սրբազան և Ննդհանուր աղգաց պատ-  
 մութեանց դասախօսութիւն մը սահմանուի , և Թուա-  
 բանութեան՝ որուն չորս գործողութեանց բարձումն  
 են հասած տակաւին , և Աշխարհագրութեան՝ որն որ  
 նոր սկսուած է , աւելի ուշադրութիւն մատուցանե-  
 լով առաջ տարուի , այն ատեն վարժարանս բաւական  
 գոհացուցիչ Նախակրթական վիճակ մը կրնայ ունե-  
 նալ , և ասով այս որք և աղքատ մանկտին ալ զուրիչ  
 չեն մնար մարդկութեան կարևոր ուսմունքներէն :  
 Ասուսնական խորհուրդը իր կազմութեան առաջին օ-  
 րէն (1863 դեկտեմբեր) իր Դ . նիստին մէջ արդէն այս  
 վարժարանիս վրայ խորհրդածութիւն ըրած ատենը  
 դիտած էր որ ինչպէս հոս պատասպարուողները անոր



և անտէրունչ ըլլալով, իրենց մանկութեամբը անանկ  
 ալ իրենց կատարելութեամբը բոլորովին Ազգինը են,  
 և եթէ ասոնք անխնամ թողուին, յետոյ Ազգին բե-  
 ուեր կրնան ըլլալ. ուստի այս վարժարանիս վրայ մաս-  
 նաւոր խնամք տանիլ առաջադրած էր, զայն նախնա-  
 կան ուսմանց յատուկ վարժապետանոց մ'ընելու նպա-  
 տակաւ. ուր ուսանողները յետոյ վարժապետու-  
 թեան կոչում կրնան ունենալ. մանաւանդ հեռաւոր  
 գաւառներու համար, ուր Պօլսեցիին խրկել կամ  
 խրկելով գոհ ընել գրեթէ անկարելի եղած է: Այս  
 ուսանողաց մէջ ժառանգաւոր ալ կրնայ պատրաս-  
 տուիլ, եթէ սոյն կոչման յարմարութիւն ունեցող  
 ըլլայ:

Սուսումնական խորհուրդը այս խորհրդածութիւն-  
 ները իր կազմութեան օրէն ըրած ըլլալով, մեծ  
 ցաւ կ'ըզգայ այժմ որ նիւթական դժուարութեանց  
 տեղի տալով, մինչև ցարդ չկրցաւ մատչիլ ի բարեկար-  
 գութիւն վարժարանիս: Սակայն վստահութեամբ կը  
 յուսայ որ վանուցս պատուարժան Հոգաբարձութիւ-  
 նը և խնամակալ աղքատասէր Տիկնայք սոյն վարժա-  
 րանին գրից և վիճակին ամէն հանգամանաց նկատ-  
 մամբ ասոր կարեւորութիւնը ղգալով, կը բարեհաճին  
 վտրրիկ ուշադրութիւն մը մատուցանել սոյն Արքանո-  
 ցին վրայ, և ԱԶԻ չափ աշակերտաց հազուստի և կե-  
 րակուրի և պատասխարութեան համար ամէն պիտոյք  
 հոգացած ատեն, անոնց ուսումնական պիտոյքն ալ  
 անտես չեն առներ. նոր շէնքի մէջ աղէկ հազուստ  
 հազնող և սննդարար կերակուր ուտող մանկտին պէտք  
 չէ զրկել կարևոր ուսմունքներէ ալ, եթէ ոչ պարապ  
 ժամանակի կորստեամբ Ազգին վրայ ծանրացած կ'ըլլան.  
 մինչդեռ զանոնք կըթելալ և ուսման անյարմարներն  
 ալ քանի մը ձեռագործ արուեստներու պարապեցնե-  
 լով Ազգին օգտակար անձինք կրնան ըլլալ: Այլ ջապէս  
 այս վարժարանը՝ որ երբեմն բարի համբաւ ունէր, և  
 Ազգին ալ ըստ կարելւոյն օգտակար եղաւ, նոյնպէս և



աւելի կրնայ ըլլալ ասկէց ետքն ալ, երբ պատուարժան  
 Հոգարարձու թիւնդ և խնամակալ բարեսէր Տիկնայք  
 փոքրիկ ուշագրու թիւն մ'ալ մանկուոյն ուսումնական  
 վիճակին ոյն է ապագային վրայ դարձնեն. և Աւսում  
 նական խորհուրդը իր փափաքանացը և սրարտուցը հա-  
 մեմատ պատրաստ պիտի դունուի դործակից ըլլալու :

11 Ապրիլ 1865

(Սփորագրեալ)

Ի դիմաց և այլն

Յ. Մանուկեան

Ս. Փափաքեան



Աղգային վարժարանները Աւսումնական խորհրդոյ  
 այցելու թեան միջոցին խնդրած ըլլալով Տումարներու  
 և Օրագրու թեանց կերպն և ձևը, խորհուրդս պատ-  
 շած համարեց անոնց մէյմէկ պատճէնը հրատարա-  
 կել, ուստի առանձին տետրով հրատարակուեցան  
 հետեւեալները,

Տումար Աշակերտութեան .	Տե՛ս Բարեկարգ՝	Կանոն	Յօդ .	24
Տումար Ա Վիճակացոյց	"	"	"	59
Օրագիր Դասատուի	"	"	"	35
Օրագիր Կառավարչի	"	"	"	46
Ամսական Ա Վիճակացոյց թուղթ	"	"	"	60

Սասնաւոր օրագիր կառավարչի, զոր իր դիւրութեանը  
 համար պիտի ունենայ :





ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆԵՐ Ի ԿԸՆՈՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Վարեկարգութեան կանոնադրութեան համար պայմանեալ միջոցը լրանալուն պէս, Խորհուրդս թէ ուրիշներէ՝ և թէ իր այցելութիւններովը ստացած դիտողութեանց համեմատ պատրաստեց հետեւեալ դիտողութիւնները իր ԽԵ. նիստին մէջ (16 փետրուար 1865). որպէս զի Վարեկարգութեան կանոնադրութեան հետ ներկայանան Նիդհանուր Ետղովոյ :

1. Վիպող-Թիւն. կանոնադրութիւն 6<sup>ր</sup> յօդուածին մէջ ըսուած է թէ, « իսկ եթէ վարժարան մը երկրորդական կարգի ուսմանց ընթացքն ամբողջ կատարելու անձեռնհաս գտնուի, կը պարտաւորի նոյն ուսմանց կարգէն պատշաճ և կարելի համարածը իր մէջ մտցընել: Եւ անոնց կարգին անհրաժեշտ աւանդելի պիտի համարուին այն ուսմունքները, որոնց համառօտութիւնը Նախակրթական վարժարանի ուսմանց կարգին մէջ աւանդուած ըլլալով, ընդարձակը Ներկրորդական վարժարանի յատկացած է » :

Խորհուրդս Նիդային վարժարանաց սովորական ընթացքը դժուարափոփոխ նկատելով, պատշաճ դատեց այս թոյլտուութիւնը վերցնել, և ըստ այնմ յիշեալ 6<sup>ր</sup> յօդուածը հետեւեալ կերպիւ կը տրամադրէ :

« Իսկ եթէ վարժարան մը երկրորդական կարգի ուսմանց ընթացքն ամբողջ կատարելու անձեռնհաս գտնուի, կը պարտաւորի

Ա. « Նախակրթական վարժարանի երրորդ տարւոյ ընթացքին սկիզբէն Վաղղիերէն և Տաճկերէն լեզուաց սկզբնաւորութիւն ընել, և շարունակել մինչև երրորդ և չորրորդ տարիներուն վերջը, որոշեալ նախնական ուսմանց հետ » :

Բ. « Նախակրթական վարժարանի ընթացքին տեղողութիւնը երկու տարի ևս աւելնալով այս է Ե և Զ<sup>ր</sup>



տարի, անոնց մէջ յիշեալ երկու լեզուաց ուսումները պիտի շարունակուին, միանգամայն Ե՞ տարւոյն մէջ պիտի աւանդուին Վերականգնական կրթութիւնք, յաշխարհաբառէ ի գրաբառ. Աղգային պատմութիւն ընդարձակ, և Թուարանութիւն ընդարձակ ։

Պիսկ Զ՞ տարւոյն մէջ Վեղեցկախօսութիւն, Տրամարանութիւն համառօտ, Արկրաչափութիւն համառօտ, Վնագիտութիւն համառօտ, Չեազրութիւն ։  
 « Այս ընթացքը Ասիական վարժարանի ուսմանց նման անհրաժեշտ չէ ։

2<sup>o</sup>. Վիպիւն-Բիւն. Անտնադրութեան 23<sup>ր</sup> յօդուածին մէջ ըսուած է թէ՛ « վարժարան ընդունուելու աշակերտը եօթն տարեկան հասակէն վար պէտք չէ ըլլալ ։

Այս մասը շատերու խորհրդածութեան սուարկայ եղաւ՝ թէ եօթն տարեկան աղայ մը արդէն մեծցած կը համարուի, և թէ ի՞նչպէս մէկ տարւոյ մէջ կարելի պիտի ըլլայ ընթերցանութիւն, գիր սովորիլ։ Վայց թէ որ ուշի ուշով նկատուէր Անտնադրութեան ուսանելեաց ընթացքը, գիւրաւ կը հասկցուէր Աւս. Խորհրդոյ այս մասին ըրած իրաւացի որոշումը. վասն զի Ասիական վարժարան մը երկու սրահի բաժնուած ըլլալով, առաջին սրահը ընդունուելու աշակերտ մը մտնելուն պէս ընթերցանութեան պիտի սկսի, ըստ 7 և 8 յօդուածոց Անտնադրութեան. ըսել է որ այնպիսի աշակերտը արդէն գիր ձանձնալու և հեգեղութիւնը ստացած պիտի գայ ի վարժարան։ Այլ այս մտքով է որ գիր ձանձնալ ու հեգեղ սահմանուած չըկայ Անտնադրութեան մէջ։ Վասն զի այդ կերպ վարժութիւնները թաղ թաղ մասնաւոր մարդոցմէ բացուած Վնտեւարաններու մէջ կը արուին, ուր 4, 5, 6 տարեկան կամ աւելի փոքր աղայք կ'երթան յաշակերտութիւն, մանաւանդ թէ ճիշդ խօսելով՝ յընտելացումն կրթութեան կամ ի պատասպարութիւն։ Այլ որովհետեւ այս Վնտեւարանները աղգային չեն համար-



ուիր, ուստի ազգային կանոնադրութեան մէջ ալ չը յիշատակուեցան :

Սակայն խորհուրդս ազգային վարժարանաց այցելութիւն ըրած ատենը՝ տեսնելով որ մինչև անգամ 2 1/2 3 տարեկան տղեկներ աշակերտութեան ընդունուած էին, և պատճառն ալ նոյն թաղին մէջ Նստելարանաց սակաւութիւնը կամ բնաւ չգտնուիլն է, որոշեց որ թաղ. խորհրդոյ կողմանէ թաղին մէջ յարմարագոյն տեղ մը՝ կամ ի հարկին վարժարանին մէջ զոտ սենեակ մը Նստելարանի յատկանայ :

Եւ այսպէս ըլլալով՝ հարկ կ'ըլլայ այժմ որ կանոնադրութեան մէջ ալ ազգային Նստելարանաց պէտքը բացատրուի. և թէ 7 տարեկանէն վար եղող աշակերտները հոն ընդունուելով, անոնց գիր ճանչնալու և հեգելու վարժութիւնը ինչպէս մատակարարել պատշաճ է, նշանակուի մի ըստ միտքէ :

3.՝ Իրողութիւն. Թէպէտ իւրաքանչիւր վարժարանի Հոգաբարձութիւն իրեն փոխանորդ Տեսուչ մը պիտի ունենայ վարժարանին մէջ, ըստ 22<sup>ր</sup> յօդուածոյ կանոնադրութեան, և Սուսումնական խորհուրդն ալ իր կողմանէ այցելութիւն ընելը պիտի շարունակէ. բայց այսու ամենայնիւ հսկողութեան պարտաւորութիւնը ճիշդ կերպով կատարելու ձեռնհաս չըլլալը փորձիւ հասկցուելով, կարևոր դատուեցաւ հաստատել Ներհանուր փետուճը, որ Սուսումնական խորհրդոյ կողմանէ յատուկ պաշտօն ունենայ Վայրաքաղաքիս բոլոր Ազգային վարժարանաց անխափան այցելութիւն ընել, օրը գոնէ երկու վարժարան չըջելով, անոնց ուսման և բարեկարգութեան ընթացքը դիտէ, և տեսած հանգամանքը տեղեկագիր ընելով շաբթէ շաբաթ Սուսումնական խորհրդոյ նիստ ըրած օրը անձամբ գայ հաղորդէ :

Ներհանուր Տեսուչը ըստ այսմ տրամադրութեան պէտք է հաստատուի,

Ա. Սուսումնական խորհուրդը պիտի ընտրէ ընդ-



հանուր Տեսուչը և Վաղարշական Դպրոցը պիտի հաստատուի :

Բ. Միգհանուր Տեսուչը ըլլալու անձը պէտք է որ անձնական արժանեաց տէր, Հայկաբանութեան և կարևոր ուսմանց հմուտ և լեզուագէտ մէկն ըլլայ :

Գ. Վայելուչ ամսական մը պէտք է յատկանալ Միգհանուր Տեսուչ եղողին, այն ալ կամ կեդրոնական սրնատու կէն սահմանելով, և կամ իւրաքանչիւր Վաղարշական Խորհրդոց սնտու կէն հանգանակելով :

Դ. Միգհանուր Տեսուչը պարտաւոր է միշտ Աւսումնական Խորհրդոյ հետ յարաբերութիւն ունենալ, և միայն անոր պատասխանատու ճանչնայ գինքը ըստ ամենայն հանգամանաց :

Ե. Քանի որ ընդհանուր տեսուչ եղող անձը իր պաշտօնին մէջ թերութիւն մը կամ իր պարտաւորութեանը հակառակ գործ մը կամ իր արժանապատուութեան անվայել վարմունք մը չցուցնէ, և կամ իրաւացի ամբաստանութեան մը ներքե չիյնայ, պիտի չհանուի պաշտօնէն. բայց եթէ աննահանջելի պատճառով ինքնին հրաժարական տայ Աւսումնական Խորհրդոյն :

Վ. յս վերջին յօդուածոյս գործադրութիւնը այնչափ կարևոր կը դատի Խորհուրդս, որչափ հարկաւոր կը տեսնէ վարժարանաց թէ ըստ ուսման և թէ ըստ բարեկարգութեան մասին կանոնադրութեան համաձայն ընթացք ունենալը :

4. Վերջինս. կանոնադրութեան 57<sup>րդ</sup> յօդուածոյն մէջ ըսուած է որ դասատուները ամէն ամսոյ գրուի իր տուած ամսական դասերուն վրայ քննութիւն ընեն : Վ. յս մասին վրայ փորձիւ նկատուեցաւ որ ամսոյ յամիս քննութիւն ընելը մեծ դժուարութիւն կը պատճառէ, ուստի այս յօդուածին զօրութիւնը եռամսեայ քննութեան շրջելը աւելի պատշաճ դատուած է Խորհրդոյս :

Վ. յս դիտողութիւնները Վաղարշական Դպրոցոյ ուս-



չադրու թեանը յանձնուեցան . միանգամայն խնդրուե-  
ցաւ որ երբ Վարեկարգութեան կանոնադրութիւնը  
ներկայ դիտողութիւններով մէկտեղ Նղգային Նդհա-  
նուր Դողովոյ ատենին ներկայանալով, Յանձնաժողո-  
վոյ մը քննութեանը յանձնուի, այն ատեն Քաղաքական  
Դողովն ալ ի դիմաց Ասումնական Խորհրդոյ առաջար-  
կէ, որ գոնէ Խորհրդոյս դիւանը ներկայ գտնուի ըլլա-  
լիք քննութեանց . որպէս զի սահմանուած կարգերուն  
և կանոններուն վրայ պէտք եղած բացատրութիւնը  
տայ, և ունեցած նկատմունքները և սրտածառները  
յայտնէ մանրամասնաբար :

Հոս հարկ կը համարինք յիշել որ Խորհուրդս ընդհա-  
նուր Տեսչին խնդրոյն նկատմամբ Քաղաքական Դողովոյ  
կողմանէ Ս. Պատրիարք Հօր 1224-211 համար նամակ  
մ'ըստացած է, որով Քաղաքական Դողովը օրինաւոր  
գտնելով Ասումնական Խորհրդոյ այս առաջարկութիւ-  
նը, արտօնութիւն տուած էր ընտրելու թեան պայման-  
ներն ունեցող անձ մը (Նդհանուր Տեսչ-ը անուանելու :  
Ասումնական Խորհուրդը բաւական ատեն այս անձին  
ընտրութեան վրայ խորհրդածեւէն վերջը, գտաւ ըստ  
ամենայն հանգամանաց այս պաշտօնին արժանաւոր և  
յարմար մէկը Նղարէկեան Սարկոս աղան, որ գարոցա-  
կան կարգերու հմուտ և փորձառու, և գիտնական ու  
լեզուագէտ անձ մ'է . և ծանոց Քաղաքական Դողովոյ  
ի 23 մարտի 1865 :



ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ

ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՆԿԱՏՄԱՄԲ

1. ԽՆԴԻՐ ՄԻԱՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ

Կ. Պօլսոյ վարժարանները որոնց վիճակը ըստ արդեանց Նախակրթական աստիճանի մէջ է այսօր, եթէ իրապէս պարզ Նախակրթական ըլլային, թերևս ամէն մէկին արդէ մեծագուճար ծախուց տեղի չէր մնար. Քայց անկէ աւելի յառաջ անցած երևնալու ապակարգ բաղձանքով մը՝ Արկրորդական կարգի իսառնուրդ մի են. Գաղղիերէն և Տաճկերէն լեզուները և Հայ գրականութեան և Քանակագիտութեան աւելի ընդարձակ մասերը կը պարունակեն, կամ կը ջանան պարունակել գրեթէ բոլոր վարժարանք:

Իայց այս բաղձանաց մէջ երկու դժուարութիւնք կ'երևին. մէկը նիւթականի անբաւականութիւն. թաղերուն գրեթէ ամէնն ալ յայսմ մասին այսօր բարւոք վիճակի մէջ չեն: Այլ թէ կան մէկ երկու թաղ որ այսօր իրենց վարժարանին դասատուաց ամուսականները ըստ կարելոյն կը վճարեն, և ուրիշ պիտոյից ծախքն ալ կը հայթայթեն առանց պարտք դիղելու, անոնք ալ չէթէ հաստատուն եկամուտներու հասոյթով, այլ տղայոց ամսաթոշակներու կամ բարեսէր անձանց նուէրներու շնորհիւն է, որ մշտատե բան մը չէ երբէք. և ասոր համար շատ անգամ վարժարանի մը բարեկարգութիւնը լսուելուն հետ, ետեւէն խանդարման լուրն ալ կ'առնուի. վասն զի 1000 ղուրուշ անհաստատ եկամուտով սկսուած բարեկարգութիւնը՝ եկամուտը զեղջում գտնելուն պէս կը խանդարի. և այս պատճառաւ արդէն եղած ծախքն ալ կը փճանայ:



Երկրորդ դժուարութիւնն է լեզուագիտութեան և ուսմանց օրինաւոր դասասուտի պահասութիւն կամ խիստ հազուագիւտ ըլլալը, և այս պարագայն առաւել ևս աղէտալի է: Երբ մտածենք որ Վաղղիերէնի հազիւ բառական թարգմանութեան և քանի մը տող գրելու քիչ մը վարժութիւն ունեցողը նոյն լեզուին ուսմանը դասախօս կը կանգնի, այս տեսակ դասախօսի մը ոտքը ուսանող դասառուին ալ վիճակը դիւրին է մակարեւել: Սակայն ինչ օգուտ, ամիսները կը գլորին, ամսականք կը դիզուին, քաշուած աշխատութիւնը ասպարդիւն մանաւանդ թէ ձանձրացուցիչ կ'ըլլայ:

Աստի խորհուրդս այս մասին դարման մ'ընելու համար Մայրաքաղաքիս վարժարանաց միացման խնդիրը առաջարկեց Վաղաքական Եղծովոյ, և միացնելու կարելի համարուած վարժարանները հետեւեալ կերպիւն անօրինել պատշաճ դատեց.

Ա. ԻՒՍԿԻՒՏԱՐ. Իճափյէ՝ Աելափյէ և Լէնի Տահալէ թաղերը միացնել, առաջինը և վերջինը պարզ Նախակրթական վիճակի մէջ թողուլ. երկրորդը՝ որ երկու թաղին մէջ տեղն է՝ Նախակրթական ընթացքէն զատ Երկրորդական կարգէն՝ խառն ընթացքի համար սահմանուած ուսմունքները ամբողջ պարունակէ. (տես Տեղեկագրիս երես 50) որպէս զի Իճափյէ և Լէնի Մահալէ թաղերէն՝ նախակրթական ուսմունքը աւարտող տղայք՝ թէ որ երկրորդական ուսմանց վաւիաքին, Աելամիյէյի վարժարանը երթան պարասլին:

Բ. ԱՄՄԱԹԻԱ. Սուրբ Գեորգ և Նարեգ-Բուրճ և Լէնի Մահալէ թաղերը միացնելով վերջին երկուքը պարզապէս Նախակրթական, և առաջինը Նախակրթական և Երկրորդական խառն կարգի վիճակելու է:

Գ. ԳՈՒՄԳԱՓՈՒ. Մայր էլէլէյի, Լէնի Գափու, Կեփի Բալայ և Գոմգափույի շուրս. այս չորս թաղերէն վերջին երեքը պարզ Նախակրթական, և առաջինը Նախակրթական և Երկրորդական խառն ընթացքով յարմարել:



Գ. Պալատ, Քարակեօճիկ և Սալմախօճրոյ միացնել և ասոնցմէ որք որ պատշաճ թուի, զայն միայն Նախակրթական և Արկրորդական խառն ընթացքի կարգադրել, միւսները պարզ Նախակրթական թողուլ: Ասոնց կրնայ կցուիլ և Գանլը քիլիսէ թաղին և Թօփքափուի վարժարանները, որոնք պարզ Նախակրթական կարգ բռնելու յարմար են:

Ե. Սիլփի-շ և Պեշիկշաշ միացնել, երկուքին մէկը պարզ Նախակրթական և միւսը Նախակրթական և Արկրորդական խառն վիճակի վերածել:

Զ. Խասգի-շ առանձին թաղ ըլլալով պէտք է որ Նախակրթական և Արկրորդական խառն ընթացք ունենայ, և Նյուսպի երկու թաղը՝ որոնք պարզ Նախակրթական վիճակ պէտք է ունենան, կրնան իրենց ուսումնատեանց տղայքը Խասգի-շ ղրկելով, հոն տեղի վարժարանը Արկրորդական ուսմանց պարապել տալ:

Է. Գատը գիւղ, Գանտիլլի, Պէյքօղ, Նոր գիւղ, Պոյաճը գիւղ, Հիսար և Գուրու չէչմէ. ասոնց մէջ ալ եթէ միայն պարզ Նախակրթական վիճակի վարժարան մը ըլլայ ըստ ամենայն հանգամանաց Կանոնադրութիւն բարեկարգեալ՝ բաւական է. և ասոնք Արկրորդական ուսմանց համար իրարու միացնելու ոչ յարմարութիւն ունին և ոչ ալ կարևորութիւն կայ, վասն զի փափաքողը կրնայ Ղալաթիոյ վարժարանը գիմել:

Ղալաթիոյ և Բերայի վարժարանաց վրայ քիչ մը ետքը պիտի խօսինք:

Այս առաջարկութեամբ Աւսումնական Խորհուրդը չէ թէ Թաղական Վարչութիւնները միացնել կ'ուզէ, այլ վարժարանաց Հոգաբարձութիւնները. և այս կերպով ծախուց մասին բաւական չափաւորութիւններ կրնան մտնել:

Միացած վարժարաններուն Թաղական Խորհուրդները իրենց կողմանէ երկերկու անձինք Հոգաբարձու ընտրելով, այս ամէնքը մէկ Հոգաբարձութիւն մը կը կազմեն, մէկ սիրտ և մէկ հոգի իրենց հսկողութեանը



յանձնուած վարժարանաց վրայ միահամուռ կ'աշխատին . ասանկով թաղերը իրենց մէջ իրար չքաշելու կամ մէկ մէկէ վար չմնալու ասպակարգ բաղձանք մը չեն ունենար . որոնցմէ ընդհանրապէս կը հետեւի չափազանց ծախք և ասորդիւն աշխատութիւն :

Նախակրթական և Նրկրորդական խառն ընթացք ունեցող վարժարանին նիւթապէս օգնութիւն ալ կրնան մատուցանել միւս վարժարանները , որ պարզ Նախակրթական վիճակի վերածուած են , եթէ ասոնց չափաւորուած ծախքէն բաժին մը միւսին նպաստ հանուի : Վերջապէս խորհուրդս կը յուսայ որ այս կերպով նիւթական վիճակի դժուարութենէ կ'ազատին թաղական վարժարանք . և ուսումնական մասին ալ գէթ առ այժմ գտնուած յաջողակ վարժապետներէ զուրկ չեն մնար :

## 2. ԱՆՐԺԱՄԱՆ ԴԱԼԱԹԻՈՅ

Ուսումնական խորհուրդն իր կազմութեան առաջին օրէն իրեն նպատակ դրած էր Պօլսոյ վարժարանաց վրայ հսկելու պաշտօնին հետ՝ գաւառաց վարժարանները չմոռնալ . և եթէ կարելի է՝ զանոնք աւելի խնամարկել և զարգացնել :

Ասանկ նպատակ մը Ազգային դաստիարակութեան տարտամ քայլափոխներու վիճակին մէջ ինչպէս կարելի էր յառաջ վարել և գործադրել : Արբ պիտոյքները բաղմաթիւ և միջոցները սակաւ են , Ուսումնական խորհուրդն ուրիշ բան չէր կրնար ընել , բայց եթէ ասանկ դժուարին պարագայից մէջ կարելի և օգտակար միջոցի մը գիտնել , և նախապատրաստութիւն մ'ընել , անոր արդիւնաւորութիւնը ժամանակին յանձնելով :

Ուստի Ուսումնական խորհուրդը երբ տակաւին նախապատրաստութեանց և խորհրդածութեան կը պարապէր , Ղալաթիոյ և Նէտիգուլէի Ս. Փրկչի վարժարանաց վրայ մասնաւոր խորհրդածութիւններ ունեցաւ : Առաջինը ցերեկային ըլլալով , իր տեղւոյն դրից և այլ



հանգամանաց նկատմամբ պանդուխտ մանկուոյն յարմար վարժարան մ'է, որ արդէն իսկ այնպէս է: Արկրորդը գիշերային ալ ըլլալով, և մանաւանդ Ազգին որք և անտէրունչ մանկանց սեպհական, աւելի յարմարութիւն ունի Ազգին պիտանի ծառայութիւն մատուցանելու, և այս ծառայութիւնը գաւառներու մէջ ամէն կողմ տարածելու:

Արկրորդին համար Աւսումնական Խորհուրդը նոյն միջոցին չէր կրնար առաջարկութիւն մ'ընել, երբ կը նկատէր և կը լսէր Հիւանդանոցի նիւթական մասին կըրած դժուարութիւնները: Իսկ առաջինին համար այս դժուարութենէն գոնէ ըստ բաւականին ազատ ենթադրելով, կը խորհէր որ գործի սկսելէն անմիջապէս վերջը պարտուպատշաճ տեղեկադրով մը խնդիրը ներկայացնէ Քաղաքական Դոզովոյ:

Ի այց ուրչափ մեծ եղաւ Խորհուրդոյս ուրախութիւնը երբ նոյն իսկ Քաղաքական Դոզովոյ կողմանէ 561-66 համար նամակաւ Ալաթիոյ վարժարանը գաւառական վարժարան ընելու և անոր յատակագիծը պատրաստելու առաջարկութիւնը ընդունեց. ասիկա յայտնապէս ցուցուց որ Ազգային դաստիարակութիւնը մանաւանդ հեռաւոր գաւառներու մէջ ծաւալելու և յառաջ տանելու էական պայմաններուն մէջ Քաղաքական Դոզովոյ ալ Խորհուրդոյս համամիտ է, և հետեւաբար անկէ պարտու պատշաճ օժանդակութիւնը պիտի վայելէ Խորհուրդը:

Այս յուսով և եռանդով Խորհուրդոյս յատակագիծը պատրաստեց իր Լ. Նիստին մէջ, և խրկեց Քաղաքական Դոզովոյ:

Յատակագիծին մէջ վարժարանին արդի նիւթական շէնքը քիչ մը ընդարձակելու կէտ մը կար: Չէր կրնար Աւսումնական Խորհուրդը նախատեսել թէ այս կէտը բոլոր խնդիրը պիտի դժուարացնէ, և թէ ասանկ առաջարկութեամբ մը մեծ սխալ մը գործած պիտի ըլլար. ըստ որում այդ մասին բաւական էր որ Ազգային Այր-



չութիւնը որոշում մը կամ հրաման մը հաղորդէր Վալաթիոյ Թաղական Խորհրդոյ :

Խորհուրդս Քաղաքական Ժողովէն պատասխան ըստացաւ 856-113 համար նամակաւ , թէ Վալաթիոյ վարժարանին շինութեան խնդիրը նիւթական կէտ մը ըլլալուն Տնտեսական Խորհրդոյ գիտողութեանը յանձնուեր է :

Խորհուրդս դարձեալ՝ ԼԲ. նիստին մէջ որոշուածին համեմատ խնդիր ըրաւ Քաղաքական Ժողովոյ որ Տնտեսական Խորհուրդը որոշում մը չըրած , նախապէս իրեն հետ Խորհրդակցելու հրաւիրուի Քաղաքական Ժողովոյ կողմանէ :

Երբ տեսնուեցաւ որ այս խնդրոյն պատասխանը ուշացաւ և ոչ Քաղաքական Ժողովէն և ոչ Տնտեսական Խորհրդէն լուր մը չելաւ , որոշեց ԼԲ. նիստին մէջ դարձեալ Թախանձալից գիր մ'ուղղել առ Քաղաքական Ժողովն , և խրկեց :

Յաջորդ նիստին Քաղաքական Ժողովոյ 964-141 համար նամակը կարդացուեցաւ , որով կը ծանուցուեր թէ Վալաթիոյ վարժարանին շինութեան խնդրոյն նըկատմամբ կրկին ազդարարութիւն եղած է Տնտեսական Խորհրդոյ . և թէ երկու Խորհուրդները մէկտեղելով այս մասին պէտք եղած տեղեկագիրը առ Քաղաքական Ժողովը հասցնելու փոյթ տարուի :

1864 Հոկտեմբեր 13 ամսաթուով գիր մ'ըստացաւ Խորհուրդս Տնտեսական Խորհրդէն , որով Աւսումնական Խորհրդոյ կողմանէ երկու անձ ի Խորհրդակցութիւն կը հրաւիրուէր : Ս. Սիքայէլեան և Ս. Փափագեանց հրաւիրանաց համեմատ որոշեալ օրը , հոկտեմբեր 20 , գացին ի Պատրիարքարան Տնտեսական Խորհրդարանը . և հոն մարդ չգտնելով , հետեւեալ նամակը գրեր են առ Ատենապետն Տնտեսական Խորհրդոյ :

Մեծապատիւ Ատենապետ

« Պատուարժան Խորհրդոյդ կողմանէ եղած հրաւերին համեմատ՝ Աւսումնական Խորհրդոյ կողմանէ ստու-



բազրեալքս եկանք այսօր Տնտեսական Խորհրդարանը  
 ժամը 7 3/4 ին . և հոն Պ . գրագրէն տեղեկացանք որ  
 Պէկեան Թաղէոս աղան փոխանորդաբար մինչև ժամ  
 7 սպասեր է , և յետոյ պատուիրելով յիշեալ գրագրին  
 որ մեր գալուն՝ ծանուցանէ մեզ յառաջիկայ ուրբաթ  
 օրը վերստին ի Տնտեսական Խորհրդարան գալու պէտքը ,  
 մեկնել է ։

«Վկատելով որ , ըստ որում Տնտեսական և Ուսում  
 նական Խորհրդոց իրարու հետ ընելիք բանակցութիւնը  
 Վալաթիոյ վարժարանին ընդարձակելու խնդրոյն վրայ  
 պիտի ըլլայ , և այս բանակցութիւնն ալ արդիւնք չպիտի  
 կրնայ ունենալ , մինչև նոյն իսկ շէնքին վրայ գտնուե-  
 լով քննութիւն չըլլայ , և ի հարկին Վալաթիոյ Թաղա-  
 կան Խորհրդոյ հետ ալ խորհրդակցելով , հարկ եղած  
 Տեղեկագիրը կարելի պիտի ըլլայ պատրաստել . աւելի  
 պատշաճ համարեցինք խնդրել պատուարժան Խորհրդէդ ,  
 որ ձեր կողմանէ երկու անձինք երեսփոխանաբար յա-  
 ռաջիկայ երեքշաբթի ի ժամ 5-6 Վալաթիոյ Խորհրդա-  
 րանը հրամայելու բարեհաճին . ուր Ուսումնական  
 Խորհուրդը պատրաստ պիտի գտնուի զանոնք ընդունե-  
 լու , և անոնց հետ խորհրդակցելու ։

Մնամք յարգանքօք

20 Հոկտ . 1864

Ի Դիմաց Ուս . Խորհրդոյ

Ի Պատրիարքարանի (Սփրազրէալ) Ս . Սիւսէլեան

Հայոց

Ս . Փափաղեանց

Այս հրաւերին համեմատ Տնտեսական Խորհրդոյ  
 կողմանէ՝ նոյն Խորհրդոյ անդամ Յովակիմեան Յովհան-  
 նէս աղան ներկայացաւ Խորհրդոյս որոշեալ օրը . և ի  
 միասին Վալաթիոյ վարժարանին այցելութիւն ընելով  
 մանրամասն հետազօտութեամբ քննելով տեսնուեցաւ  
 որ շէնքին ընդարձակութիւնը անհրաժեշտ պէտք է . և  
 ասիկա ալ աւելի թեթեւ ծախքով մը գոցելու համար  
 սրահի մը շինութիւնը բաւական է , որ կրնայ 18-20



հաղար զուրուշով աւարտիլ : Յովհաննէս աղան յետոյ յարեց թէ թէպէտ Վալաթիոյ վարժարանը իբրև Աեդրոնական Վաւառական վարժարան՝ ընդարձակելու համար պէտք է որ Աեդրոնական Մատուկէն նպաստ ընդունի բայց Աեդրոնական Մատուկը այս օգնութիւնն ընել չը կրնար : Խորհուրդս պատասխանեց թէ Վալաթիոյ վարժարանը Աեդրոնական Մատուկէն ակնկալու թեան պէտք մը չունի . և ոչ ալ Թաղական Մատուկը այդչափ ծախքն ընելու դժուարութիւն մ'ունի :

Խորհրդածութիւններէ վերջը շուտ մը Տեղեկագիր պատրաստուելով Խորհուրդս կնքեց , և Յովակիմեան Յովհաննէս աղան ալ զայն ստորագրեց իբրև անդամ Տնտեսական Խորհրդոյ , և խրկուեցաւ առ Քաղաքական Ժողովն :

Ասոր պատասխանը ուշանալով , Խորհուրդս դարձեալ գիր գրեց առ Քաղաքական Ժողովն , խնդրելով որ այս կարևոր խնդրոյն վախճան մը տայ :

Ասոր ալ պատասխանը ուշանալով , դարձեալ գիր խրկուեցաւ առ Քաղաքական Ժողովն , միանգամայն առ Տնտեսական Խորհուրդն :

Վերջապէս Սուսումնական Խորհուրդը մեծ ցաւով սրտի տեսնելով այս խնդրոյն յապաղումը , և նիւթական շէնքի խնդրովը այսքան պարապ ժամանակ կորսուիլը . փութաց իւր Նիստին մէջ Վալաթիոյ վարժարանին բարոյական շէնքը շուշացնել , և զանազան գաւառներէ տղայ բերելու որոշումը , որ Լ. Նիստին մէջ եղած է , դորձագրել : Սուստի գաւառներուն վրայ մասնաւոր հետազոտութեամբ նկատելով , և անոնց կարօտութեանը ու բազմամարդութեանը և կարողութեան համեմատ հետևեալ կերպիւ իւրաքանչիւրէն ուղուելու աշակերտաց թիւը՝ որոշեց .



2	Մարդու ան, Ամասիա	1	Դերջան
3	Շապին Քարահիսար	1	Ուրֆա
3	Թոքաթ	1	Շնքուշ
3	Ալվաղ	1	Տիվրիկ
3	Խարբերդ, Չմշկեղեկ	3	Կեսարիա
1	Քուլէ վանք	3	Գաղատիա
2	Արաբկեր	2	Ատանա
2	Այն	1	Մարաշ
1	Քաբերդ	1	Օէյթուն
3	Կարին	1	Հաճըն
1	Չարսանձախ	1	Տէրէնտէ
2	Քալու	2	Անթապ
1	Հասան քալէ	2	Եօղլատ
1	Կարս	1	Պալքքէսէր
3	Վան	1	Վառնա
2	Սուշ	1	Քէօթահեա
1	Քաղէշ	1	Մալաթիա
2	Տիգրանակերտ	2	Պաղտատ
2	Երզնկա		

Արոշուեցաւ այս ցանկին համեմատ խնդրել որ առ իւրաքանչիւր Առաջնորդս և թաղական խորհուրդս շքաբերական գիր ուղղուի Ս. Պատրիարք Հօր և Քաղաքական Եղովցի կողմանէ, որպէս զի իւրաքանչիւր տեղէ ուղուած տղաքները փութով խրկուին, և ազգային դաստիարակութիւնը գաւառներուն մէջ բնիկ երկրացի տղայոց միջոցաւ ծաւալելու և հանրացնելու պէտքը և գործը առանց յասպաղման ժամանակի տեսնուի և կարգադրուի

Արոշուեցաւ նաև որ խրկուելիք շքաբերականաց մէջ ծանուցուի

Թէ Մալաթիոյ վարժարանը Գաւառական Կեդրոնական վարժարան եղած ըլլալով, իւրաքանչիւր առաջնորդական վիճակներէ 1-2-3 թուով տղայք կ'ուղուին,

Թէ այս տղաքները պէտք են առաջուց ըստ բաւականին ուսեսալ ըլլան, որչափ որ նոյն գաւառին մէջ



հնարաւոր է , և 13 է մինչև 15 տարեկան , հոգ չէ թէ  
առաջնորդանիստ քաղաքէն կամ գիւղէն ըլլան , միայն  
թէ արժանաւորը գտնուի ,

Թէ ընտրուած տղայն աղքատ ընտանեաց վերաբե-  
րի , և անոր փութաջանութիւնը և սրամտութիւնը  
ստուգելէ զատ , նաև յետ ուսանելոյ և վերադարձին  
ի հայրենիս իւր անպատճառ պարտաւոր ըլլայ դաս-  
տիարակութեան պաշտօնը չափաւոր ամսականով մը  
վարելու . այս կերպով պիտի ազատուին վարժապետ  
փնտռելու հոգէ , և յարմար մէկը չգտնելու կամ գը-  
տածնին գոհացնել չկրնալու մտատանջութիւններէ ,

Թէ ընտրուած տղաքը հոս Պօլիս նոյն երկրէն գըտ-  
նուող ձեռնհաս հայրենակցաց նիւթական խնամոց  
յանձնուին . և եթէ ձրի խնամելու յանձն առնող բա-  
րերար չգտնուի ալ , հոն դաւառին մէջ կամ ազգային  
սնտուկէ կամ մասնաւոր հանգանակութեամբ կամ որ-  
և իցէ կերպիւ հոգ տարուի ամսական մը հայթայթե-  
լու , և հոս իրենց հաւնած և ընտրած անձին յանձնե-  
լով , անոր խրկուի ամսական վարձքը , և ան խնամե-  
տղան ,

Թէ ծանուցուի յատկապէս որ Ազգային Աեդրոնա-  
կան Վարչութիւնը մասնաւոր խնամք և հոգ պիտի  
տանի նոյն տղայոց վրայ . բարոյապէս ըստ ամենայնի  
պիտի պաշտպանէ և խնամարկէ զանոնք , և ուսումնա-  
կան մասին ալ Աւսումնական Խորհուրդը մեծ հոգ պի-  
տի տանի որ ժամանակին ուսմանց պայմանեալ ըն-  
թացքը աւարտեն և յաջողակութեամբ դառնան իրենց  
Հայրենիքը :

Այս պայմաններուն մէջ թէպէտ և յայտնի կ'երե-  
ւայ նիւթական մասին անկարողութիւն մը և պատաս-  
խանատուութենէ փախուստ մը . բայց գոնէ հիմակու  
հիմա առանկ ըլլալը ի հարկէ է . եթէ Ազգը նիւթական  
մասին արդի դժուար կոչութենէն աղտաի , և Աեդ-  
րոնական սնտուկն ալ կորող ըլլայ դաւառաբնակ ազ-



գային մանկաւոյն օգնու թիւն մը մատուցանել, ան ա-  
տեն Աեգրանական Աարչու թիւնը աւելի մեծ երախ-  
տիք մ'ըրած կ'ըլլայ անոնց : Բայց առ այժմ գոնէ բա-  
րոյական պաշտպանութիւն մը, խնամք մը, անոնց ու-  
սու մնական վիճակին վրայ մասնաւոր հոգատարութիւն  
մը բաւական կ'ըլլան անոնց յառաջադիմութեանը, և  
օր մը իրենց հայրենեաց մէջ օգտակար ծառայու-  
թեանց կոչում ունենալու :

Ի վերայ այս ամենայնի ջեմք մտնար առանց շը-  
նորհակալութեան յիշելու հոս թէ արդէն Ապրիլիոյ  
վարժարանին վրայ տեղւոյն Վատուարժան Թաղական  
Խորհուրդը մասնաւոր խնամք ունի, աշակերտաց մեծ  
մասը գաւառաբնակ մանկտին կը կազմէ. և անոնց կա-  
րեորագոյն ուսման նքները կը մատակարարուին. ուս-  
մանց ընթացքը լրացնող բաւական աշակերտներ հա-  
սած, և անոնցմէ գրտերը զանազան գաւառներու մէջ  
և նոյն իսկ Վոլսոյ մէջ վարժապետութեան պաշտօն կը  
վարեն : Եւ թէպէտ ատեն մը քիչ մը նիւթական մասի  
դժուարութիւն մը Թաղական Խորհրդոյն մտաւտան-  
ջութիւն տալով, վարժարանին ծախքը իջեցնել խոր-  
հեցաւ. բայց ուրիշ միջոցներով և մանաւանդ վայրկե-  
նական դժուարութեանց շուտով բարձմամբը՝ այդ  
խորհուրդը չգործադրուելով վերջացաւ, որ աւելի  
սրտախիւ կը բերէ յիշեալ Թաղական Խորհրդոյն :

3. ԱՄԹԵՆԸՆ ԲԵՐԱՅԻ՝

Վերը Վայրաքաղաքիս վարժարանները միացնելու  
խնդրոյն մէջ տեսնուեցաւ որ Տարեկարգութեան կա-

Բերայի մէջ ինչպէս նաև Բարակեօմիւրի մէջ նախորդ Բաղաքական  
ժողովը գիշերօթիկ վարժարան հաստատելու առաջարկութիւն ըրած էր :  
Բերայի վարժարանին արդի ծախուցը նայելով, Խորհուրդս տարակուսե-  
ցաւ այս առաջարկութեան վրայ. ըստ որում Բերա կրկու սեռի համար  
Նախախրթական վարժարաններ ի հարկէ ունենալէն զատ, գիշերօթիկ  
վարժարան մ'ալ հիմնելու ըլլայ, մեծ ծախուց գուռ սխտի բանայ : Բե-  
րայի Թաղական օժանդակին ստոյգ կորողութեան վիճակը չգիտնալով այս  
մասին որոշում տալու Խորհուրդս չհամարձակեցաւ. ուստի երկրորդական  
ուսմանց յատուկ կանոնաւոր ցերեկային վարժարան մը հոն հաստա-  
տելու որոշում տրուեցաւ, թերևս զայն յարատև պահելու շտի հաստա-



նոնադրութեան հոմեմատ վարժարաններուն մէկ մասը պարզ Նախակրթական, և մէկ մասն ալ Նախակրթական և Երկրորդական խառն ընթացք պիտի ունենան :

Այլ սակայն Վանոնադրութեան մէջ երկրորդական ուսմանց ամբողջ ընթացք մը դրուած ըլլալով, Ասում նական Խորհուրդը այդ մասին նկատած է որ երկրորդական ուսմանց համար գոնէ առ այժմ մէկ Վեդրոնական վարժարանի մը պէտքը կայ, և այս պէտքն ալ Երայի վարժարանը միայն կրնայ լեցնել :

Երա մանչ և աղջիկ աղայոց համար Ք.Ա.Նաւուլուլայի մէջ տուն կարողութիւն մ'ունենալ ենթադրելով, իսկ թէ որ Թագական որնտուկին կարողութիւնը բաւականանայ, այս վարժարանը կարելի է նաև գիշերօթիկ ալ ընել :

Քարակէօմբիւկի համար Խորհրդոյս անանկ կը թուի թէ գիշերօթիկ վարժարան մը կառավարելու շտի կարողութիւն չպիտի ունենայ. եթէ ունենայ ալ, հաստատուն աղբիւրներէ չպիտի ըլլայ, ուստի աւելի աղէկ կ'ըլլայ որ Նախակրթական և Երկրորդական խառն ընթացք ունեցող վարժարան մը հաստատուի հան : Քարակէօմբիւկի, և Սալմաթօմբուքի և Պալասի և Թօփրափուի : ոմէնուն ալ նպատակաւոր ըլլայ :

Արգարե գիշերօթիկ վարժարանի պէտքը անուրանալի է : բայց այդ մասին բազմադիմի գծուարութիւններ կ'երևին. եթէ բոլորովին ազգային ըլլայ այս վարժարանը, և տեսչութիւնն ալ Ազգին յանձնուած, կը վարչութի : մինչև որ հաստատուն եկամտ տի աղբիւր կամ միջոցներ չտեսնուին : իսկ եթէ յաւով ձամբայ ելլուի, և ետքն գծուարութեանց հանդ խլելով, ևս կենալ հարկ ըլլայ, և զան ծախսերն ալ կ'ընենան : Եւ սրովհետև գիշերօթիկ վարժարան մը ոչ այնչափ աղքատ աշակերտի : որչափ հարուստներու համար պիտի ըլլայ. պէտք է որ այս մասին հարուստները աւելի հոգ տանին, և մասնաւոր ընկերութեամբ մը առանկ հիմնադրութեան մը ձևով նարկեն, և Ազգին վրայ բեռ չթողուն :

Ուրիշ բան է ևրբ Ազգային Վեդրոնական սնտուկը կարող կ'ըլլայ, և Ազգին աղքատ զուակաց որոշեալ թիւի մը համար, բաց ի Ս. Փրկչի վարժարանէն՝ որ արդէն որքանոց մ'է : ուրիշ գիշերօթիկ վարժարան մը կը բանայ, և հան թոշակաւոր աշակերտներ ալ կ'ընդունէ :

Սակայն այս վիճակնուս մէջ աւելի վայելուչ կը տեսնուի Խորհրդոյս, և թէ մասնաւոր ընկերութեան յանձնուի այսպիսի հոգ մը : Մանաւանդ թէ աս ալ գիւրին է. ըստ որում Խորհուրդս յատուկ հետադոտութեամբ իմացած է որ Պոլսոյ օտարազգի տղէճներուն մէջ բաւական թուով Հայ պատանիներ կան, մանչ և աղջիկ, և ասոնց համար առ նուազն 2-3 հարիւր հազար զուբուշ տարուէ տարի կ'եկայ Հայոց Ազգին քսակէն. այս ստակը յօծարութեամբ առնողները՝ թէ որ հոմին կրնան իրենք մտնալ, և ընկերութիւն մը կազմելով հիմնել գիշերօթիկ վարժարանը : որով քանի մը աղքատ Հայ զուակներ ալ շնորհ կը գտնեն ձրի դաստիարակուելու : Ահա այս է գիշերօթիկ վարժարանի համար Խորհրդոյս կարծիքը, այս վիճակնուս մէջ :



Նախապէս թաղան վարժարան ունի արդէն . Նարեկեան վարժարանին նախապէս թու թիւնն ալ հոն վերցնելով , ասիկա բոլորովին երկրորդական ուսմանց կրնայ յատկանուլ : Թաղական սնաուկը նիւթական մասին գլխաւարութիւն մը քաշելու երկիւղ չունի . երկրորդական ուսմանց համար հմուտ վարժապետներ գտնելու գլխաւարութիւն մ'ալ չկայ հոն . և Վերա կեդրոնատեղի մ'ալ ըլլալով , հոն կրնան գիմել Գոլսոյ ամէն կողմերէն այն ուսումնաստեղ մանկատին , որ նախապէս թու թիւնն իրենց թաղին վարժարանին մէջ աւարտելէն ետքը , Ներկրորդական ուսմանց ամբողջ ընթացքը կատարելու փափոք ունին :

Մ.յս վարժարանին հաստատութիւնը Վազին համար խիստ կարեւոր սկտք մ'է . իսկ Վազին ներկայ վեճակին նկատմամբ միակ գործադրելի միջոց . և Վերայի Թաղական Խորհրդոյն ալ Վազին մեծ ծառայութիւն մ'ընելու յարմար առիթ :

Մ.յս խնդիրը Քաղաքական Դպրոցոյ առաջարկուելուն պէս , անդեկագիր մը խնդրեց , և Խորհուրդն ալ նայն անդեկագիրը թէպէտ պատրաստեց ու խրկեց , բայց յետոյ լուր մը չառաւ :

#### 4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Վազը Ներկրորդական ուսմանց համար մէկ վարժարանով եթէ այսօր գոհ ըլլայ . օր մ'ալ յուսով ենք որ Վստուծոյ շնորհիւր այս վարժարանները բազմացնելու պէտքը պիտի ունենայ . Վրդ Ներկրորդական վարժարանները իրենց համար դասատուներու պէտք ունին . այս դասատուներն ալ պատրաստուելու համար բարձրագոյն Վարժապետանոցի մը . բարձրագոյն վարժապետանոց մ'ալ դարձեալ բարձրագոյն ուսմանց վարժապետներու . Վազը օր մը այս վարժապետները ուսկէ կրնայ ունենալ :

Ասումնական Խորհուրդը այս մասին կարեւորագոյն



նախապատրաստու թեան մը ուղեց ձեռնարկել: Այս  
 նախապատրաստու թիւնն էր, Արկորդական ուսմանց  
 մէջ յաջողակ քանի մը ընտիր Հայ աղքատ պատանիներ  
 խրկել ի Փարիզ մեծ Արժայեւտանոցը. որոնք Վրա-  
 կանու թեան և Վիտու թեան կրկին ճիւղերուն մէջ վար-  
 ժուելէն վերջը երբ դառնան ի Պօլիս, ան ատեն կարելի  
 ըլլայ բարձրագոյն Արժայեւտանոցն ալ հաստատել:

Իայց Ազգն այսօր այս նիւթական կարողութիւնը  
 չունենալով, ուրիշ միջոց մը խորհեցաւ Աւսու մնակաւ  
 խորհուրդը: Իարեհինամ կառավարութիւնը՝ որ իր ա-  
 մէն կարգի հպատակաց վրայ հայրական խնամք ունի,  
 ասանկ շնորհ մը՝ որ մէկ անգամի համար ալ պիտի ըլ-  
 լայ, չզլանար իր սիրելի և հաւատարիմ հայտակէն:

Աւստի այս առաջարկութիւնը Քաղաքական Դոզո-  
 վոյ ներկայացնելով խնդրուեցաւ որ ասոր ուշադրու-  
 թիւն մատուցանելով, եթէ արժան դատի, որարու-  
 ու պատշաճ խօսքերով մը խնդիրը ներկայացնէ բարեխը-  
 նամ կառավարութեան:

Քաղաքական Դոզովը 1163—192 համար նամակաւ  
 պատասխանեց խորհրդոյս թէ “Այժմ բարեպատէհ շը-  
 րապիւր բարեինամ Տէրո-Բիւնէն 7—8 րդայ Փարիզ խրկել— շնորհը  
 ինչրէլ, քանի որ արդէն վեհափառ կայսրը ինչնայօժար այսպիսի  
 շնորհ չը ըրած է նաև Տէր Ազգին քանի չը րդայ Փարիզ շրկելը”:

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*



Օ . ' .

# ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ

## ԴԱՍԱԳՐՈՑ ՆԿԱՏՄԱՄԲ

### 1. ՑՈՒՑԱԿ ԻՒՐԱՔԱՉԻՒՐ ՈՒՍՄԱՆՑ

Ուսու մնական խորհուրդը մէկ կողմէն Բարեկարգութեան կանոնաց գործադրութիւնը և վարժարանաց այցելութիւն ընելու զբաղած, միւս կողմէն սահմանեալ ուսմանց համար դասագրաց պիտոյքը նըկատելով, էն առաջ սկսաւ խորհանքի ուսմանց Յուշակ պատրաստել. որպէս զի այն հիման վրայ պատրաստուին Դասագրքերը:

Մ. յս ցուցակը թէպէտև Նախակրթական և Ներկրորդական ուսմանց իւրաքանչիւրին պարունակութեան նը վրայ պէտք էր գրուած ըլլալ. բայց որովհետև, ինչպէս քիչ մ'առաջ ըսուեցաւ, ազգային վարժարանները իրենց արդի վիճակին մէջ գլխաւորաբար Նախակրթական ուսմանց կրնան պարասլիլ, և Ներկրորդական ուսմանց կարգէն պատշաճագոյնները իրենց մէջ պարունակել, (տես վերը էրես 50) ուստի հիմակու հիմա այս ուսմանց ցուցակը պատրաստել և անոնց դասագրքերուն հոգ տանիլ արժան դատուեցաւ:

Նշանձին տետրի ձևով այս Ցուցակը հրատարակուած ըլլալով, հոս ալ անոր վրայ խօսք ընել աւելորդ կը համարինք:

### 2. ԴԱՍԱԳԻՒՔ

Դպրոցական օրինաւոր դասագրքերու պիտոյքը ոչ ոք կրնայ ուրանալ. Ուսումնական խորհուրդը որչափ ժամանակ կրցաւ ունենալ, ջանաց այս մեծ պիտոյքը գոնէ մասամբ իւրիք լեցնել:



Գասագրքի միօրինակութեան սկզբունքը Աւսումնական խորհուրդը իր առաջին նիստերուն մէջ մերժեց . և միջոց և յարմարութիւն ուղեց թողուլ, որ իւրաքանչիւր ոք իր ձեռնհասութեան չափով այս ասպարիզին մէջ մրցի : Ա՛մէն մէկ ուսման մէկ և աւելի դասագրքեր ունենալ ոչ թէ դպրոցական յառաջագիմութեան կը վնասէ, այլ ընդ հակառակը օրինաւոր դասագրքերու թիւը կ'աւելցնէ . ուսմունքները աւելի դիւրուսոց եղանակ մը կ'ըստանան . և թերևս քնոց չափաւորութիւններ մտնելով աւելի դիւրութիւններ կ'ըլլան : Սիսոյն թէ պէտք է որ այս դասագրքերը միօրինակ հիման մը վրայ ըլլան, որ է ուսմանց հուցակը, և Աւսումնական խորհրդէն ալ վաւերացած :

Այս սկզբունքով ձեռնարկեց Աւսումնական խորհուրդը դասագրքի պատրաստութեան, և բարեբաղդ է ըսելու որ այսօր վաւերացուցած պատրաստական ունի

Քերական,

Ինթերցանութիւն,

Քերականութիւն, քաղաք-իւան գրուած

Ազգային Պատմութիւն

Արբաղան Պատմութիւն

Աշխարհագրութիւն համառօտ, Վախասպարաւորութիւն, հրաբարհուած

Աշխարհագրութիւն Քաղաքական, Ինական, Աւսումնական

Թուարանութիւն համառօտ

Տրամաբանութիւն համառօտ

Ինագիտութիւն համառօտ :

Համառօտ և Արձակ Բրիտանիական վարդապետութիւններ, որոնք ի խնդրոյ խորհրդոյս պատրաստուած և Արօնական Եղիովէն վաւերացած են :

Գեղեցկախօսութիւն մը պատրաստութեան յանձնուած է :

Հայերէն և Քիւրտերէն Ազգային և Արբաղան Պատ-



մութիւններ, որոնց վրայ խորհուրդս իր դիտողութիւններն ըրաւ, և յանձնեց հեղինակին ըստ այնմ սրբագրելու, որպէս զի յետոյ վաւերանայ:

Տաճկերէն Վերական մ'ալ Վաղաքական Վոզովէն խորհրդոյս դիտողութեանը յանձնուած ըլլալով, ընդունուեցաւ:

### 3. ԻՐԵՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Իրերավարժ ուսուցումը պարզ Նախակրթական վարժարանաց մէջ իր դիւրուսոյց եղանակին հետ խընացողութեան միջոցներ ալ ունի. որուն համար մասնաւոր փոյթ ունեցաւ խորհուրդս, և յատուկ Հրահանգ մ'ալ խմբագրուեցաւ:

Նյս Հրահանգին գործադրութիւնը խասգիւղի Վերսիսեան վարժարանին մէջ 6-7 ամսէ ի վեր սկսուած է, և ըստ այնմ փորձառու Թեմքաջազադ փոփոխութիւններով թէպէտ տպագրելու ալ որոշեց խորհուրդս, բայց ժամանակը չներելով ետ մնաց:

Իրերավարժ եղանակով ուսուցումը դիւրացնելու և գործադրելի ընելու համար խորհուրդս վաւերացնելով ընդունեց

Պնակք իրերավարժական՝ Թուաբանութեան, որ 36 հատ է ընդ ամենը, և հրատարակուած:

Նոյնպէս Պնակք իրերավարժական՝ Մեթերցանութեան, պատրաստութեան յանձնուած:

Համառօտութիւն Վերականութեան ի պէտս նոր ուսանողաց, որ շատ դիւրութիւն կրնայ տալ Իրերավարժ ուսուցման:





ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

1. ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սահմանադրութիւնը Ուսումնական Խորհրդոյ վըրայ պարտք դրած ըլլալով որ ազգային յառաջադիմութեան նպաստող ընկերութիւնները խրախուսէ . Խորհուրդս երեք կարգ ընկերութեանց վրայ մասնաւոր ուշադրութիւն մատուցած է , և ջանք ըրած է իր այս պարտքը գոնէ ըստ կարելոյն կատարել :

Այս ընկերութեանց մէջ առաջինն է Վարժապետական ընկերութիւնը :

Վարժապետները Ազգին այն պաշտօնեաներն են , որ Ազգային յառաջադիմութեան ուղղակի և անմիջական պաշտօնը կը վարեն . Ազգը վարժարաններէն և վարժարանները վարժապետներէն կախումն և ակնկալութիւն ունին : Բայց կը տեսնենք որ ամէն ատեն Ազգը վարժապետներէն , և վարժապետները Ազգէն գանգատ ունեցած են , և սակայն Ազգը պարտաւորուած է դարձեալ նոյն վարժապետները գործածելու , և վարժապետներն ալ իրենց պաշտօնը վարելու :

Երկու կողմն ալ իրենց համար իրաւունքներ ունին . վարժապետը կը գանգատի որ ամէն ատեն իր պաշտաման մեծութեանը և կարևորութեան նկատմամբ յարգչէ ստացած Ազգէն . և Ազգը՝ թէ վարժապետները իրենց պաշտաման մեծութեան և կարևորութեան նըկատմամբ արժանաւորութիւն և ձիրք կամ արդիւնք չեն ցուցըցեր :

Ազգային վարժարանաց անգոհացուցիչ վիճակին մէջ իրաւ է որ վարժապետներն ալ իրենց ինկած բաժինն ունին . բայց ըստ մեծի մասին այդ պատասխանատու-



ութիւնը Ազգային Արշութեան և անոր ճիւղերուն  
կամ գլխաւորաբար Թաղական Խորհրդոց կը վերաբե-  
րի . սակայն վարժապետաց գանգաւոյն նկատմամբ  
Ազգն ալ՝ Ազգային Արշութիւնն ալ իր բոլոր ճիւղե-  
րով պատասխանատուութիւն ունի : Օրինաւոր վարժա-  
պետներու թիւը օր աւուր նուազելու վրայ է . ըստ  
որում վարժապետութիւնը իր ներկային մէջ անպա-  
տիւ է , և իր վախճանին մէջ թշուառ . երբ երևելի  
վարժապետներ իրենց կենաց վերջին օրերը թշուա-  
ռութեամբ կնքած են , ասիկա բնական թելադիր և  
քարոզմը կ'ըլլայ յաջորդաց որ իրենց առոյգութեան  
մէջ փախուստ տան այս ազգօգուտ և նուիրական  
պաշտօնէն . որով և ասպարէզը կը մնայ կարօտեալնե-  
րու , որոնց համար ալ Ազգը կը գանգաւորի :

Օրինաւոր վարժապետներու թիւը աճեցնելու հա-  
մար արդարեւ պէտք է որ Ազգն ունենայ վարժապե-  
տանոցներ . բայց ունեցած վարժապետները շահելու  
միջոցներ ալ պէտք են . և ասոր համար Սահմանադրու-  
թիւնը գեղեցիկ սկզբունք մ'ունի , Ազգին ծառայու-  
թեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը  
բարւոքել և ապագայն անդորրել :

Սահմանադրութիւնը առաջին անգամ այս սկզբ-  
բունքը հրատարակած ատեն , վարժապետները ոգևու-  
րած՝ միացեր են իրենց մէջ և Արժապետական անու-  
նով ընկերութիւն մը կազմեր են , իրենց նպատակ ու-  
նենալով նիւթական բարոյական և ուսումնական վի-  
ճակնին բարւոքել : Թէպէտ և իրենք նիւթապէս Ազ-  
գին վճարքովը կ'օգտին . բայց իբրև ընկերութիւն մը  
նիւթական շատ տեսակ բարւոքումներ կրնայ ունենալ .  
բարոյապէս ալ իրենց վարժապետական վարկն ու պա-  
տիւը կը ճանչեն ու կը պաշտպանեն . իսկ ուսումնա-  
պէս՝ Ազգին ըրած ծառայութիւննին կը կրկնապատկեն .  
ի հարկէ իբրև մէկ ընկերութեան անդամ և ազգային  
պաշտօնակիցներ՝ միանալով և իրարու հետ խորհրդակ-  
ցելով , թէ իրենց դաս տուած ուսմանց դիւրուսոյց



եղանակներ գտնելու, և թէ կարևոր խնդիրներ լուսաւորելու մեծապէս կը նպաստեն: Հետեւաբար Վարժապետական ընկերութիւնը որչափ վարժապետաց օգտին համար կազմուած սեպուի, անուղղակի կերպիւ Վ. Գ. Գին աւելի մեծ օգուտ և ծառայութիւն մատուցանելու նպատակ ունի:

Ասանկ ընկերութիւն մը որ բոլորովին վարժապետներէ կը բաղկանայ, ի հարկէ Վ. Գ. Գային Պատրիարքարանի կողմէն ալ իր հաստատութեան վաւերացումը խնդրելու պէտքն ու պարտքն ունէր: Աւստի Վ. Գ. Գ. մանակեայ Վարչութեան խառն յողովոյ օրով Վարժապետական ընկերութիւնը իր կանոնադրութիւնը ներկայացուցեր էր Վարչութեան, և վաւերացումը խնդրեր էր:

Խառն յողովը քանի մը գլխաւոր դիտողութիւններ ըրած, և նորոգ կազմուելու վրայ եղող Վ. Գ. Գային Սահմանադրական Վարչութեան Աւսումնական Խորհրդոյ դիտողութեանը վերաբերելի կէտեր նշմարած ըլլալով, Վարժապետական ընկերութիւնը պարտաւորեր էր իր խնդիրը կախ թողուլ, մինչև Սահմանադրութեան հաստատութիւնը և Աւսումնական Խորհրդոյ կազմութիւնը:

Աւսումնական Խորհուրդը կազմուելէն վերջը ստանալով Վարժապետական ընկերութեան կանոնադրութիւնը, իր դիտողութիւններով խրկեց Քաղաքական յողովոյ, և Քաղաքական յողովն ալ իր դիտողութենէն վերջը վաւերացուց կանոնագիրը, որ այս է.

#### Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն

#### Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

1. Վարժապետական ընկերութեան նպատակն է, իրեն անգամ եղող վարժապետաց նիւթական, բարոյական և ուսումնական վիճակին բարւոյթութեանը հոգ տանիլ:



2. Այս ընկերութեան անդամ կրնան ըլլալ այն վարժապետները՝ որ արդէն Ազգին մէջ իրենց արդեամբը ծանուցեալ են :
3. Իւրաքանչիւր ընկեր ընկերութեան կողմանէ ընկերակցութեան վա-  
կայական պիտի ունենայ . և ամսական գոնէ 3 դուրու շնոց մէկ բաժին տուրք  
անխափան պիտի վճարէ ընկերութեան :
4. Վարժապետական ընկերութիւնը պիտի ունենայ Ա. Ընդհանուր  
ժողով մը . Բ. Տնօրէն ժողով մը . և Գ. Մասնաժողովներ : Ընդհանուր ժո-  
ղովը կը բաղկանայ ընկեր եղող բոլոր վարժապետներէն . Տնօրէն ժողովը  
կը բաղկանայ հինգ ընկերներէ՝ Ընդհանուր ժողովոյ ընտրութեամբը . իսկ  
Մասնաժողովները Տնօրէն ժողովոյ կարգադրութեամբը կը կազմուին , իւ-  
րաքանչիւր ուսմանց յատուկ . նոյն ուսմանց հմուտ ընկեր եղող բոլոր վար-  
ժապետներէն :
5. Ընդհանուր ժողովոյ իրաւունքն է Ընկերութեան Տնօրէն ժողովէն  
և Մասնաժողովներէն համար պահանջել , տարին անգամ մը ժողովելով . Ս .  
Սահակայ և Ս . Մեծարայոյ տօնախմբութեան յետագայ կիրակի օրը :
6. Արտաքոյ կարգի Ընդհանուր ժողով ալ կրնայ գումարուիլ . 1. Տն-  
օրէն ժողովոյ սրոյնամբը . 2. Ընկերաց մեծագոյն մասին ստորագրեալ  
խնդրագրովը . որ պիտի ուղղուի առ Տնօրէն ժողովն . 3. Ազգային վար-  
չութեան Ուսումնական Խորհրդոյ կողմանէ՝ յատուկ ազգարարութեամբ  
առ Տնօրէն ժողովն :
7. Տնօրէն ժողովն գոնէ երկու շաբաթն անգամ մը պիտի գումարուի  
սրոյնեալ օր մը . և իր պաշտօնն է , ընկերութեան ընդհանուր գործոց հըս-  
կել , վարժապետական վարկն ու պատիւը ամէն կարգի ու աստիճանի ազ-  
գայնոց առջև պաշտպանել , ընկերութեան անտուկին և ելեմտից հոգարար-  
ձութիւնն ընել , ընկերաց նիւթական և բարոյական վիճակին բարւոքու-  
թեան հոգ տանիլ . և ի պաշտօնէ յարարութիւն ունենալ ընկերութեան  
իւրաքանչիւր Մասնաժողովներուն հետ : Տնօրէն ժողովոյ պաշտօնը շորս  
տարի կը տևէ :
8. Վարժապետական ընկերութիւնը իր Տնօրէն ժողովին միջոցաւ յա-  
րարութեան մէջ պիտի գանուի Ազգային Ուսումնական Խորհրդոյն հետ .  
և անոր որ և իցէ ուսումնական յանձնարարութեանց հոգ պիտի տանի :
9. Իւրաքանչիւր Մասնաժողով գոնէ ամիսն անգամ մը պիտի գումար-  
ուի , և իրենց պաշտօնն է իւրաքանչիւրն իր ուսումնական վիճակին բար-  
ւոքութեանը հոգ տանիլ , իրենց ուսման ծիւղը զարգացնել , և գիւրբն և  
բարեկարգ եղանակով ուսուցանել : Մասնաժողովներուն պաշտօնը մշտնջե-  
նաւոր է :
10. Թէ Տնօրէն ժողովը և Թէ Մասնաժողովները իրենց յատուկ կանո-  
նագրութիւնները պիտի ունենան , որոնց Ընդհանուր ժողովէն պիտի վա-  
ւերանան :
11. Ընկերութեան անտուկը հաւարուած դրամը պիտի գործածուի  
կարօտ եղող ընկեր վարժապետաց օգնութեան համար , սրոյնեալ կանանի մը  
համեմատ . և ընդհանրապէս ընկերութեան օգտակար գործոց համար :  
Ընդհանուր ժողովոյ սրոյնած կերպով :
12. Ընկերութեան պարտուց մէջ զանցառութեան մասին յաճախողը :



եթէ ընկերութեան կողմէն եղած աղքատութեանց ալ անաստէ : ընկերութենէն դուրս կը թողուի :

13. Ներկայ կանոնադրութիւնս ամէն երեք տարին անգամ ճշ կրնայ վերաքննուիլ և փոփոխիլ ընկերութեան կողմանէ : բայց գարձեալ Ազգային վարչութեան վաւերացմամբը պիտի ընդունուի :

## 2. ՍԱՆՈՒՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ

Քանի մը թաղերու մէջ Սանոց անունով ընկերութիւններ կան, թէ վարժարանէ ելլող և թէ տակաւին վարժարանի մէջ եղող աշակերտաց մէջ :

Ուսումնական խորհուրդը նկատելով որ այս ընկերութիւնները կրնան օգտակար ըլլալ Ազգին, և մասնաւորապէս իւրաքանչիւրն իր թաղին : խորհեցաւ որ այս ընկերութիւնները միօրինակ նպատակի գործածելով աւելի արդիւնաւոր ընէ : ուստի որոշեց նախ սոյն ընկերութեանց համար ընդհանուր ծրագիր մը պատրաստել, և այլա ըստ այնմ հաստատուած ընկերութեանց հրաւէր ընել, կամ պէտք եղած տեղը նոր ի նորոյ կազմել :

Այս ընկերութիւնները շէն կրնար, ինչպէս ոմանք իրենց նպատակ ունին, իրենց թաղին վարժարանաց նիւթապէս նշանաւոր ծառայութիւն մ'ունենալ : Բայց կրնան իրենց մէջ հաւաքուած ամսական կամ տարեկան հանգանակութեամբ ստակի գումար մ'ունենալ, և անով ընթերցանութեան համար կարևոր գիրք և լրագիր ստանալ : յատուկ ընթերցարանի մը մէջ որոշեալ ժամանակներ ժողովուելով՝ ընթերցանութեան պարասիլ, թաղին մէջ ընթերցասիրութիւնը տարածել, բարի օրինակ ըլլալ ամէն թաղեցւոց :

Ուստի այս ընկերութիւնը վարժարանէ ելլող աշակերտներէ կազմուիլը պատշաճ թուեցաւ խորհրդոյս :

Այս ընկերութիւնները կրնան օգնել անոնց, որ իրենց ուսմանց ընթացքը յաջողակութեամբ կատարելով կ'ելլեն վարժարանէ, և կարօտ կամ աղքատ ըլլա-



լով անգործութեան ու յուսահատ վիճակի մէջ կը մնան :  
 Նոյնպէս կրնան օգնել դեռ վարժարանի մէջ եղող յա-  
 ջողակ բայց կարօտութեան համար վարժարանէն ան-  
 ժամանակ հրաժարուելու ստիպուող աշակերտաց . նա-  
 և վարժարանին ուսումնական մանր պիտոյքները հոգալ :  
 Այս ամէնքը իրենց ձեռնհասութեան չափովը կրնան  
 ընել , և օգտակար ըլլալ Ազգին , և մասնաւորապէս ի-  
 րենց թաղին :

Ուստի Ուսումնական Խորհուրդը այս ընկերու-  
 թեանց համար հետեւեալ ծրագիրը պատրաստեց :

« Իւրաքանչիւր թաղի Ազգային վարժարանէ ելող  
 աշակերտները իրենց մէջ ընկերութիւն մը պէտք է  
 կազմեն « Սանուց ընկերութիւն » անունով . որոնք հե-  
 տեւեալ սկզբանց համեմատ պիտի պատրաստեն իրենց  
 ներքին կանոնադրութիւնները , և զանոնք Ազգային  
 Ուսումնական Խորհրդոյ վաւերացմամբը պիտի գոր-  
 ծադրեն » :

1. « Սանուց ընկերութեանց սլարտքն է յարմար  
 դատուած օգնութիւնն ընել ընկերներուն » :

2. « Թաղին վարժարանին յաջողակ և կարօտ աշա-  
 կերտաց օգնել նիւթապէս և բարոյապէս » :

3. « Վարժարանին ուսումնական պիտոյքը հոգալ  
 ըստ ձեռնհասութեան » :

4. « Թաղին մէջ ընթերցասիրութիւնը տարածել » :

5. « Ինկերները պարտական են ամսական կամ տա-  
 րեկան բաժանորդական որոշեալ աուրք մը վճարել » :

6. « Ինկերները պարտական են ընկերութեան յա-  
 ուջադիմութեանը ջանագիր ըլլալ , և յանուն ընկե-  
 րութեան խնդրուած ծառայութիւնը յօժարակամ մա-  
 տուցանել » :

7. « Իւրաքանչիւր Սանուց ընկերութիւն իր թա-  
 ղին մէջ որոշեալ ազգային հաւաքատեղի մ'ունենա-  
 լու է . սւր որոշեալ ժամանակներ՝ մանաւանդ կիրակի



և տօն օրերը Ս. Ալեքեղեցւոյ ժամերգութեան աւարտմանէն յետոյ կարող ըլլան ժողովիլ ։

8. « Սանուց ընկերութիւնները դրսէն Պատուոյ անդամ կրնան ունենալ բաժանորդագրութեամբ նպաստող ընկերութեան ։

Յետոյ Սամաթիոյ Սահակեան Սանուց ընկերութիւնը՝ որ բաւական տարիներէ ի վեր կազմուած, և թաղին Սահակեան Թանգարանն ալ իր հաստատութեան սկիզբէն ի վեր իր Հաւաքատեղին ըրած և մինչև ցարդ յարատեւած է, հրաւիրուեցաւ Սուրբ Գրքերու խորհրդարանն ի Վալաթիա ։ Ի դիմաց ընկերութեան ներկայացող անձանց վերոգրեալ սկզբունքը հաղորդուելով, ըստ այնմ իրենց կանոնադրութիւնը պատրաստեցին, և Սուրբ Գրքերու խորհրդոյ կողմէն նոյն կանոնադրութիւնը ընդունուելով վաւերացաւ ։

Եւ ամանակ չըլլալով ուրիշ քանի մը թաղերու Սանուց ընկերութիւններն ալ հրաւիրել, կը յուսամք որ անոնք ալ այսպէս վաւերանալով օգտակար կ'ըլլան Վալաթին ։

### 3. ԱՆՁ ՆԱՆՈՒԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վալաթիոյ յաւաքատեղութեան նպաստող ընկերութեանց կարգին գրեթէ առաջին տեղը բռնած է այս ընկերութիւնը, որ իր նպատակովն և արդիւնքովն ալ աւելի գովելի և խրախուսանաց արժանի ընկերութիւն մ'է, և որ շէր կրնար անտես մնալ Սուրբ Գրքերու խորհրդոյ ուղղորդութենէն ։

Վ. յս ընկերութեան Վալաթիոյ ճիւղը 5 տարիէ ի վեր կը շարունակուի. և ամէն կիրակի օրեր Վալաթիոյ Վալաթիոյ վարժարանը բացուելով, հոն 70-80 բեռնակիր, կօշկակար, ջրհանակիր և հնակարկատ պանդուխտ աղքատներ կը յաճախեն, ընթերցանութիւն, գիր, թուարանութիւն, քերականութիւն և աշխարհ



հազարութիւն ուսանելու : Ասոնց մէջ մինչև Հայ գը-  
րագիտութեան պարապելու և տրամաբանութեան ըս-  
կզբանց դասառութեան հետեւելու չստի ժամանող ա-  
շակերտներ կան . ինչպէս որ Աւսուժնական խորհրդոյ  
կողմանէ այցելութիւն եղած միջոցին տեսնուեցաւ :

Սեբաստիոյ մէջ ալ կիրակի օրերը բացուեր է տեղ-  
ւոյն վարժարանը , որուն դասատուները 'Վալաթիոյ  
վարժարանի մէջ կիրակի օրերը դասառութեան պա-  
րապող քանի մը Սեբաստացիք են : Հոն աշակերտաց  
թիւը 132 ի հասեր է :

Այս լուրն Աւսուժնական խորհուրդս առնելուն  
պէս փութաց շնորհակալութեան գիր գրել առ տեղ-  
ւոյն 'Կեր . Առաջնորդ կարապետ Սրբազան Արքեպիս-  
կոպոսն , միանգամայն շնորհակալութիւն յայտնելով  
առաջնորդական փոխանորդ Արժ . Պետրոս Վարդա-  
պետին , և Թաղական խորհրդոյ և բոլոր ազգասէր ան-  
ձանց . որ օժանդակ գտնուեր են այս ազգօգուտ 'ն-  
կերութեան հոն ծաղկելուն . և խնդրելով իրենց պաշտ-  
պանութիւնն ու օգնութիւնն անպակաս ընել անոր  
յառաջադիմութեանը համար :

Նաև Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր ալ  
յատուկ գիր գրեց խորհուրդս , որ բարեհաճի ինք ալ  
խրախուսել յատուկ գրով , և յանձնարարութիւն ընել  
տեղւոյն Սրբազան Առաջնորդին և Թաղական խոր-  
հրդոյ սոյն ընկերութեան հոն գտնուող անդամները :

Խորհուրդս արժան համարեցնաւ գրով իր շնորհա-  
կալութիւնը յայտնել 'Վազարոսեան Քրիստոստուր ա-  
ղային , որ 5 տարիէ ի վեր 'Վալաթիոյ վարժարանը ամէն  
կիրակի օրեր դասատուութեան կ'երթայ անընդհատ .  
և ընդհանուր դասատուութեան հոգը վրան առած ,  
մեր Հայաստանցի եզբարց մտաւորական զարգացմանը  
բոլորովին անձնուէր եղած է գովելի եռանդով :

Անձնանուէր ընկերութիւնը գրեանց պէտք ունե-  
նալով , այս մասին ալ խորհուրդս ըստ իւրում կարի



նախատ մը զանց ընել չուզելով, փութաց նուիրել յիշեալ ընկերութեան,

20 օրինակք Ազգային Պատմութեան. այս ուսմունքը որ խրատական դասախօսութեամբ կ'աւանդուի աշակերտաց, յատուկ ուշադրութեան արժանի ըլլալով, դասագիրքն ալ յաջողակներու ձեռքը գտնուիլը կարևոր դատեց:

Վարձեալ 10 օրինակք Թուարանութեան Պատկերերաւարժական. այս ուսուցման եղանակը աւելի կարևորագոյն կը համարուի սոյն ընկերութեան աշակերտաց:

Վարձեալ 100 օրինակք Քերականութեան:

Հոս կը վերջանայ Աւսումնական Խորհրդոյ Տեղեկագիրը:

Ինչպէս կը տեսնուի, այս ամէն աշխատութիւն՝ նախապատրաստութիւններ են, և սերմեր՝ որոնց արդիւնքը ապագային մէջ կրնայ ստացուիլ: Աւսումնական Խորհուրդը առաջին քայլն է որ կ'առնէ. և այս առաջին քայլին հետ կրած դժուարութիւնները յայտնի են փորձառու անձանց: Սակայն Աւսումնական Խորհուրդը կը յուսայ որ, եթէ իր աշխատուէց ասպարիզին մէջ՝ միջոցներու պակասութեամբ թերութիւններ եղած կան, անոնց ներողամիտ աչօք կը նայուի:

Կեդրոնական Վարչութիւնը երբ Աւսումնական Խորհուրդ մ'ունի Ազգին ընդհանուր դաստիարակութեւ պաշտօնին կոչուած, ի հարկէ ամէն Հայ՝ որ ներկայ դարուս մէջ դաստիարակութեան ինչ կարևորութիւն ունենայը գիտէ, և յառաջագիմութեան միակ ու կարևոր միջոց զայն կը ճանչէ, նոյն դաստիարակութեան



տեսչութիւնը վարող Ազգային Խորհրդոյն վրայ ալ ու-  
րիշ կերպ ուշադրութիւն մը կ'ունենայ :

Այս ուշադրութիւնը որչափ անաչառ ըլլայ՝ ար-  
գարացի է, որովհետեւ խնդիրը ազգային կենաց և մա-  
հու խնդիր է : Այս պաշտօնին կոչուած Խորհրդոյ  
մը անուշադրութիւնը կամ անհոգութիւնը ստգտա-  
նելի է :

Ասումնական Խորհուրդը այս պաշտօնին կոչուած  
օրէն կ'ըզգայր պաշտօնին ծանրութեանը հետ միջոց-  
ներուն նուազութիւնն ալ . բայց Վարչութեան մը հը-  
րաւէրին հնազանդելու և ազգային ծառայութիւն մը  
յօժարակամ յանձն առնելու կրկնակի պարտիքը յար-  
գել ուզելով առանց վարանման ձեռք առաւ իրեն  
յանձնուած պաշտօնը :

Կործին սկզբնաւորութեան օրէն երեցած ազգա-  
յին եռանդը բաւական ակնկալութիւն մ'էր Խորհրդ-  
ոյս : Բայց դժբաղդութիւնը ինչպէս ամէն ատեն ե-  
ռանդոտ սրտերուն բոցը շիջուցանել կը փորձէ, նոյն  
փորձն ըրաւ նաև Խորհրդոյս համար : Վարչութեան  
մէջ յարուցուած կարծեաց անհամաձայնութեան խըն-  
դիր մը, ազգային կարևոր խնդրոց լուծման յապա-  
ղում մը, պաշտօնէութենէ հրաժարումներ և նորոգ-  
ընտրութիւններ, նիւթական դժուարին կացութիւն  
մը և այլն և այլն, որոնց ամէնքն ալ ազգային գործոց  
տեղեկութիւն ունեցող անձանց ծանօթ են, թէ որ  
խապառ չլքոյց Վարչութեան և անոր բոլոր ճիւղե-  
րուն ընթացքը, գո՛նէ անոնց ակնկալութիւնը և պաշ-  
տօնի յանձնառութեան օրին եռանդը նուազեցոյց :

Այ դք կրնայ ուրանալ Վարչութեան Դողովոց և  
Տեսուչ և Թաղական Խորհրդոց մէկմէկու հետ կա-  
պակցութիւնը և ունեցած յարաբերութիւնը . դարձ-  
եալ ոչ ոք կրնայ ուրանալ Վարչութեան Դողովոց և  
Խորհրդոց ոմանց մէջ անցած դէպքերը : Ասումնա-  
կան Խորհուրդը իր պաշտաման շրջանակին մէջ որչափ  
յարաբերութիւն որ ունի, այնչափ ազդեցութիւն



կրած է դիպուածներէ . մանաւանդ որ իր գործառ-  
նութիւնները տակաւին նախապատրաստութիւնք և  
հիմունք ըլլալով, միշտ պարտաւորուած էր խորհուրդ .  
հարցնել և խորհուրդ ստանալ և որոշում սպասել Վարչ-  
չութեանէն կամ խնդրոյն իրաւասութեան տէր եղող  
խորհուրդներէ :

Սեր այս ըսածները լիովին կը բացատրեն և կը հաս-  
տատեն Տեղեկագրիս մէջ մինչև ցարդ պատմուած-  
ները . և ընթերցողը փոքրիկ ուշադրութեամբ մը կը  
տեսնէ անոնց մէջ թէ խափան կամ արգելք ըլլալու  
ինչ պարագաներ տեղի ունեցեր են :

Սակայն Թաղական Խորհրդոց վիճակը՝ որոնք ուղ-  
ղակի հսկողութիւն և պաշտօն ունին ազգային վար-  
ժարանաց վրայ, աւելի խոչընդոտ եղած է : Սահմա-  
նադրապէս դեռ նորոգ կազմուած Թաղական Խոր-  
հուրդներ հետզհետէ հրաժարական տալ սկսան ամ-  
բողջ կամ մասամբ . տեղ տեղ ալ բնաւ Թաղական Խոր-  
հուրդ չկար, որոնց համար ստիպուեցանք գանգաւ  
ընել առ Քաղաքական Եղովն . տեղ տեղ ալ և գրե-  
թէ ամէն Թաղական Խորհուրդ նիւթական մասին  
դժուարութիւններու մէջ կը տառանդին :

Նսանկ պարագայի մէջ Ուսումնական Խորհուրդը  
ինչ կրնար ընել . բայց եթէ բոլոր պաշտօնակիցներով  
առանց նկատելու միջոցներուն նուազութեան և դժ-  
ուարին պարագաներու՝ առանց իսկ յուսահատելու՝  
չթողուլ պաշտօնին ղէկը, և հնարաւոր ու օգտակար  
տնօրէնութեանց պարապիլ :

Նհա այս տնօրէնութիւններն են որ կը սպասուէ սոյն  
Տեղեկագրիս :

Պարտք կը համարիմք յայտնել նաև թէ Խորհուր-  
դրս իր ծախուցը մասին թէ դիւանական պիտոյից և  
թէ տպագրութեանց համար, այսինքն Վարեկար-  
գութեան Կանոնադրութեան, Օրագրութեանց պատ-  
ճէնի, իւրաքանչիւր ուսմանց Ցուցակի, և ներկայ  
Տեղեկագրիս և այլոց տպագրութեան ծախուցը հա-



մար, ազգային սնտուկին վրայ բնաւ չէ ծանրացած,  
և անոնք ալ ձրի ցրուած է:

Վերջացնելով ներկայ Առաջին Լըրկամեայ (չորեքտա-  
սանամսեայ) Համարատուութիւնս, ազգային յառա-  
ջագիմութեան գործոյն յաջողութեանը վրայ մեծ ա-  
կրնկալութեամբ, որուն ցանկացողն ենք միշտ,

Մ'նամք

1 Մայիս 1865  
Ի Խորհրդարան  
Վալաթիոյ

Սիրելի Ազգիս Անճնուէր

Խոնարհ ծառայք

ԱՆԴԱՄՔ ՈՒՍՈՒՄ'ՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

- ՍԻՄՈՆ Պ. ՏԱՏԵԱՆ Ապեհապէտ
- ԿՈՍՏԱՆԻ Գ. ԿՈՍՏԱՆԻԵԱՆ
- ՅԱԿՈԲԻԿ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ Ապեհապէտի Ժոխանորդ
- ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՐ. Տ. ԿՐՊ. ՏԵՐՈՅԵՆՑ
- ԳԱԲՐԻԷԼ ԳՐԱՍԵՐԵԱՆ
- ՍԻՄՈՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ապեհապէտի Ժոխանորդ
- ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ Ապեհապէտ






Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Second section of faint, illegible text in the middle of the page.

Third section of faint, illegible text, appearing as a list or series of entries.

Final section of faint, illegible text at the bottom of the page.







№ 7343

















P. U.

№ 2343